Հայաստանում Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի ներդրման մոտեցումներ

Սույն փաստաթուղթը մշակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համար «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում:

Ծրագրի իրականացնող՝ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն

Ծրագրի ֆինասավորող՝ Շվեդիա

Ծրագրի կայքէջ՝ https://ace.aua.am/projects/waste_policy/

Հոկտեմբեր, 2023թ.

Հապավումներ

ԱԸՊ	Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն
ԱՊԿ	Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական միության
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԷԷՍԹ	Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոն
ՇԴԵՏՄ	Շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցներ
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՏԳ	Տնտեսական գործիք
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Բովանդակություն

Հապավումներ **2**

Բովանդակություն **3**

1. Ներածություն **5**

2. Հասկացություններ **6**

3. Հայաստանում առկա խնդիրները **8**

4. Միջազգային փորձը **9**

4.1. ԵՄ և ՏՀԶԿ երկրներ 9

4.2. ԵԱՏՄ երկրներ և Վրաստան 13

5. Հայաստանում ԱԸՊ համակարգի ներդրման իրավական հիմքերը և նպատակները **13**

6. Հիմնական դրույթներ **15**

6.1. Հատուկ թափոնի խումբ 15

Հայաստանում նախընտրելի հատուկ թափոնի խմբեր 16

6.2. ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտ 17

Ընդհանուր նկարագրություն 17

Փոքր արտադրող 17

ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի ընդհանուր պարտավորություններ 18

Ֆինանսական պարտավորություններ 19

ՀՀ-ում ԱԸՊ ինստիտուտի ներդրման ֆինանսա-հարկային մոտեցումը 20

Թիրախների ապահովման պարտավորություններ 21

ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) օտարման առանձնահատկությունները 23

6.3. Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն 23

Ընդհանուր նկարագրություն 23

ԱԸՊ իրականացման մոդելներ 24

ԱՊԿ-ի պարտավորությունները 26

Հայաստանի համար ԱՊԿ-ների թվի նախընտրելի մոտեցում 27

6.4. Թափոնների գործածության կազմակերպություններ 27

6.5. Շրջակա միջավայրի նախարարություն 28

6.6. Տեղական ինքնակառավարման մարմիններ 28

Հավելված Ա - ԱԸՊ համակարգի հիմնական դերակատարներ և գործընթացներ **29**

Հավելված Բ - Թափոնի խմբերի ընտրության չափանիշներ **30**

Հավելված Գ - Հաշվետվողականությունը ԱԸՊ համակարգում **38**

Հավելված Դ - ՀՀ-ում առաջարկվող ԱԸՊ օրենսդրական կառուցվածք **39**

Հավելված Ե - ԱՊԿ-ի հնարավոր կազմակերպական-իրավական ձևեր 43

Հավելված Զ - ԵԱՏՄ երկրներում եվ Վրաստանում ներդրված ԱԸՊ ինստիտուտի վերաբերյալ տեղեկանք (նախագիծ)..... 50

Ռուսաստանի Դաշնություն.....50

Բելառուս 53

Վրաստան 55

1. Ներածություն

Փաստաթղթի նպատակն է աջակցել Հայաստանում ԱԸՊ ինստիտուտի ներդրման նախընտրելի մոդելի, դրա կազմակերպական, գործառնական և օրենսդրական մոտեցումների մշակմանը:

Փաստաթղթում ներկայացված են ԱԸՊ ինստիտուտի հիմնական նպատակները, սահմանումները, ինչպես նաև դրա տարբեր բաղադրիչների իրականացման տարբերակները և միջազգային լավագույն փորձը: Նշված տարբերակների վերաբերյալ բազմաշահակիր կողմերի ներգրավմամբ կազմակերպվող քննարկումները գործնականում թույլ կտան ձևավորել ԱԸՊ հայաստանյան մոդելը, որը հետագայում հիմք կհանդիսանա ԱԸՊ օրենսդրական դաշտը մշակելու համար:

Մինչդեռ ապրանքների (արտադրանքի) սպառման փուլում առաջացած թափոնների ծավալն անընդհատ աճում է, դրանց հիմնական մասը հայտնվում է երկրի տարբեր աղբավայրերում: Այս պրակտիկան բացի բնապահպանական, սոցիալական և հանրային առողջապահության ոլորտում բացասական ազդեցություններից, հանգեցնում է նաև թափոնների՝ որպես երկրորդային նյութական ռեսուրսի տնտեսական արժեքի կորստին:

Չնայած Հայաստանում թափոնների վերաբերյալ վերջերս որդեգրված քաղաքականություններն ու ընդունված ռազմավարություններն ավելի շատ կենտրոնացած են կոշտ կենցաղային թափոնների հավաքման համակարգերի բարելավման վրա, այնուամենայնիվ, դրանց արդյունքում աղբավայրերում թափոնների տեղադրման ծավալների նվազեցում տեղի չի ունենում: Ավելին, ներկայումս չկան աղբավայրերում թափոնների տեղադրման ծավալների նվազեցման առնչությամբ հստակ սահմանված թիրախներ և դրանց հասնելու համար արդյունավետ խթաններ:

Տնտեսական ոլորտի գործող ռազմավարությունն առաջնահերթությունների շարքում չի դիտարկում որևէ աջակցություն մասնավոր հատվածին ներդրումներ կատարելու թափոնների տեսակավորման և վերամշակման ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ինչը գործնականում կխթաներ սպառման թափոնների կայուն գործածությունը, մասնավորապես՝ հետվերադարձի նպատակով դրանց հավաքումը և փոխադրումը, կրկնօգտագործումը, վերամշակումը, օգտահանումը կամ վնասազերծումը, հեռացումը (ինչպես օրինակ պահանջվում է որոշ վտանգավոր թափոնների դեպքում):

ԱԸՊ ինստիտուտի ներդրումը հնարավորություն կտա ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից առաջացող թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության ապահովման պարտավորությունը դնել այդ ապրանքները (արտադրանքը) արտադրող և ներմուծող տնտեսվարող սուբյեկտների վրա: Գործնականում դա թույլ կտա նվազեցնել և կառավարելի դարձնել այնպիսի թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպիսիք են տարան, փաթեթավորումը, շահագործումից դուրս եկած մարտկոցները և կուտակիչները, ավտոմեքենաների անվադողերը, յուղերը (նաև օդի և յուղերի օգտագործված զտիչները), լուսավոլտային վահանակները, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումները, շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցները և հատուկ թափոնների այլ խմբերին պատկանող թափոնները:

Միաժամանակ, ԱԸՊ ինստիտուտի առանցքային կետերից է նաև թափոնների գործածության ոլորտում վերամշակման ազգային թիրախների սահմանումը, որոնց ապահովման շնորհիվ

Հայաստանում համապատասխանաբար կբարձրանան նաև թափոնների վերամշակման ցուցանիշները: Ավելին, այս ինստիտուտը կօգնի իրագործել նաև պատասխանատու (կայուն) սպառման և արտադրության մոդելները (ԿԶՆ 12) և ձեռնարկել հրատապ ու համաչափ գործողություններ կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ պայքարելու ուղղությամբ (ԿԶՆ 13):

2. Հասկացություններ

Ստորև ներկայացված հասկացությունները և դրանց սահմանումները օրենսդրական ձևակերպումներ չեն, հիմնված են միջազգային փորձի վրա, հանդիսանում են քննարկման նպատակով մշակված նախնական տարբերակներ, որոնք ենթակա են փոփոխման:

- **թափոնի խումբ (waste stream)՝**
  ընդհանուր հատկանիշներ ունեցող որոշակի տեսակների թափոնների ամբողջություն.
- **հատուկ թափոն (special waste)՝**
  թափոններ, որոնց գործածության համար ԱԸՊ օրենսդրությամբ սահմանված են հատուկ միջոցառումներ.
- **ԱԸՊ ապրանք (արտադրանք)՝**
  ապրանք (արտադրանք), որի սպառման կամ օգտագործման արդյունքում առաջացած հատուկ թափոնների գործածությունը մասամբ կամ ամբողջությամբ կարգավորվում է ԱԸՊ օրենսդրությամբ.
- **հատուկ թափոնի խումբ՝**
  ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառման կամ օգտագործման արդյունքում գոյացող հատուկ թափոնների ամբողջություն.
- **արտադրողի ընդլայնված պատասխանատվություն՝**
  իրավական, բնապահպանական, ֆինանսական, տեղեկատվական և կազմակերպական կառուցակարգերի համակարգ, որով ընդլայնվում է ԱԸՊ ապրանք (արտադրանք) արտադրող-իրացնող, ներմուծող և ներմուծող-իրացնող տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունը՝ ապահովելու ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) սպառման կամ օգտագործման արդյունքում առաջացած հատուկ թափոնների մասնակի կամ ամբողջական գործածությունը՝ օրենքով սահմանված կարգով.
- **ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներ՝** անհատ ձեռնարկատերեր, իրավաբանական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հայաստանյան ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, մասնավորապես.
  (1) ՀՀ տարածքում ԱԸՊ ապրանքներ (արտադրանք) արտադրողները՝ ՀՀ տարածքում օտարված ապրանքների մասով, իսկ պատվիրատուի պատվերով ՀՀ տարածքում արտադրված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի), այդ թվում դրանց տարայի, փաթեթավորման կամ դրանց առանձին մասի համար՝ պատվիրատուն ՀՀ տարածքում օտարված ապրանքների մասով (այսուհետ՝ «արտադրող-իրացնողներ»),
  (2) ԱԸՊ ապրանքները (արտադրանքը) ՀՀ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծողները, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԸՊ ապրանքներ (արտադրանք) ՀՀ ներմուծողները (այսուհետ՝ «ներմուծողներ»),

(3) վերը նշված 2-րդ կետին համապատասխան՝ ԱԸՊ ապրանքները (արտադրանքը) ներմուծող և ՀՀ տարածքում օտարողները (այսուհետ՝ «ներմուծող-իրացնողներ»).

- **արտադրողի պատասխանատվության կազմակերպություն՝**
  ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից ստեղծված կազմակերպություն, որի նպատակն է համակարգել ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից գոյացող հատուկ թափոնների հավաքումն ու էկոլոգիապես անվտանգ գործածությունը.
- **ԱԸՊ սխեմա՝**
  մեկ կամ մի խումբ ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) համար արտադրողի ընդլայնված պատասխանատվության կիրառումն ապահովող սկզբունքների, նորմերի և մեխանիզմների ամբողջություն.
- **առաջնային տեսակավորում՝**
  թափոնի գոյացման սկզբնաղբյուրում (տնային տնտեսություն, գրասենյակներ, հանրային սննդի օբյեկտներ, առևտրի օբյեկտներ և այլն) թափոնների կազմակերպված տեսակավորված հավաքում.
- **երկրորդային տեսակավորում՝**
  առաջնային տեսակավորում անցած թափոնների գործարանային տեսակավորում.
- **Էկոլոգիապես անվտանգ գործածություն՝**
  թափոնների՝ մարդու առողջության, շրջակա միջավայրի և կլիմայի վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող գործածություն, մասնավորապես՝ հավաքում և հետվերադարձ՝ կրկնօգտագործման, վերամշակման, երկրորդային հումքի կամ էներգիայի արտադրության, վնասազերծման նպատակով:

3. Հայաստանում առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ բնակավայրերում առաջանում է միջինում օրական 1,887 տոննա կամ տարեկան 688,937 տոննա կոշտ կենցաղային աղբ: Գոյացող աղբը հիմնականում տեղափոխվում է ներկայումս շահագործվող աղբանոցներ, որոնց թիվը 2020 թվականի դրությամբ 297 էր:[1]

ՀՀ մի քանի բնակավայրերում մասամբ ներդրվել են վերամշակելի թափոնների (ապակու, թղթի, պլաստիկի, մետաղի) գոյացման սկզբնաղբյուրում տեսակավորման համակարգեր, որոնք կառավարվում են հասարակական կազմակերպությունների կամ համայնքապետարանների կողմից: Այդ համակարգերի միջոցով հավաքված և տեսակավորված թափոնները կազմում են ՀՀ վերամշակվող թափոնների ընդհանուր ծավալի դեռևս չնչին մասը՝ ոչ ավելի քան 5 %: Վերամշակման ուղարկվող թափոնների հիմնական մասը՝ մոտավորապես 95 %-ը, տեսակավորվում է ոչ ֆորմալ խմբերի կողմից հենց աղբանոցներում:

Սակայն ակնհայտ է, որ աղբանոցներում թափոնների տեսակավորման ու դրանցից օգտակար բաղադրիչների կորզման պրակտիկան գործնականում ունի մի շարք բացասական կողմեր: Մասնավորապես.

- ապահովված չեն սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները և այլ անհրաժեշտ պայմանները, ինչի արդյունքում հաճախակի են կորզողների վնասման, թունավորման և մահվան դեպքերը: Այս պրակտիկան բերում է առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների սահմանադրական իրավունքի խախտման.

- երբ մետաղների կամ այլ տնտեսական արժեք ունեցող նյութերի կորզման նպատակով աղբավայրերում այրվում են մալուխներ և շահագործումից դուրս եկած այլ ապրանքներ, մթնոլորտ են արտանետվում թունավոր գազեր, առաջանում է անկառավարելի հրդեհների բարձր ռիսկ: Ավելին, վերամշակման ենթակա թափոնները, օրինակ՝ ապակե, թղթե, պլաստիկ, մետաղյա տարաները և փաթեթավորումը (օր. շշեր, տուփեր և այլն) կորցնում են իրենց տնտեսական արժեքը և դառնում են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր, քանի որ խառնվելով չտեսակավորված կենցաղային թափոնների հետ՝ աղտոտվում են սննդային մնացորդներով, կենցաղում օգտագործվող քիմիկատներով և այլ թունավոր նյութերով.

- համայնքին պատկանող թափոններից ստվերային եղանակով տնտեսական արժեք ունեցող բաղադրիչների կորզման և վաճառքի արդյունքում համայնքը զրկվում է որոշակի եկամուտներից, որոնք կարող էր ստանալ այդ թափոնների օտարումից.

- ծանրաբեռնվում է համայնքային աղբահանության համակարգը՝ հաշվի առնելով, որ վերամշակելի թափոնները կազմում են կենցաղային աղբի ծավալի մոտ 50 տոկոսը.

- վերամշակելի թափոնների ստվերային եղանակով կորզման և վաճառքի արդյունքում անհայտ են մնում երկրում թափոնների վերամշակման իրական ծավալները, ինչը

[1] Աղբյուր՝ Աղբահանության համակարգի ռազմավարություն, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 464 - Լ որոշում

բացասաբար է անդրադառնում այս ոլորտում իրականացվող մշտադիտարկումների արդյունքների հավաստիության ու լիարժեքության վրա.

- ցածր է մնում հանրային իրազեկվածության մակարդակը թափոնների կայուն կառավարման և, մասնավորապես՝ սկզբնաղբյուրում դրանց տեսակավորման օգուտների վերաբերյալ.

- աղբանոցներում թափոնների տեսակավորումն ու կորզումը կարող է բացասաբար անդրադառնալ երկրի թափոնների կառավարման համակարգի արդյունավետության և բնապահպանական ցուցանիշների վրա՝ հաշվի առնելով այս ոլորտում առկա վերը թվարկված աշխատանքի անվտանգության, հանրային առողջության, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պահպահության մասով առկա խնդիրները:

Վերը նկարագրված իրավիճակը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև Հայաստանում «աղտոտողը վճարում է» սկզբունքի թերի կենսագործմամբ, դրա կիրառությունը ապահովող անհրաժեշտ գործիքակազմի, կոշտ թափոնների տեսակավորված հավաքման և հետագա պատշաճ գործածության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ֆինանսական միջոցների համակարգված հավաքագրման մեխանիզմների բացակայությամբ:

Ուստի, արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի ներդրումը գործնականում թույլ կտա ապահովել ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից գոյացող հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածությունը՝ հատուկ այդ նպատակով ԱԸՊ ապրանքներ (արտադրանք) արտադրող կամ ներմուծող տնտեսվարող սուբյեկտներից հավաքագրվող ֆինանսական միջոցների հաշվին:

4. Միջազգային փորձը

4.1. ԵՄ և ՏՀԶԿ երկրներ

1980-ականների վերջից սկսած «Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն» ինստիտուտը մի շարք երկրներում դարձել է բնապահպանական քաղաքականության մաս և դրա իրագործման արդյունավետ գործիք: Հատկանշական է, որ 2001 թվականից ի վեր զգալիորեն աճում է ԱԸՊ ինստիտուտը կիրառող երկրների թիվը:

Ստորև բերված պատկերում ներկայացված է 1970-2015 թթ. ԱԸՊ սխեմաների՝ տարբեր երկրներում ներդրման աճի դինամիկան՝ համաձայն ՏՀԶԿ տվյալների:



ԵՄ անդամ շատ երկրներում սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորումն իրականացվում է որպես թափոնների կառավարման ռազմավարության մաս: Մասնավորապես, ԵՄ «Թափոնների շրջանակային դիրեկտիվը» սահմանում է վերամշակման ընդհանուր թիրախներ, որոնց իրագործման համար անդամ պետությունները պարտավոր են իրականացնել և խթանել սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորումը: Հարկ է նշել, որ թափոնների տեսակավորման իրենց հաջողված փորձով առանձնանում են Բելգիան, Գերմանիան, Շվեդիան, Նիդերլանդները և Ավստրիան:

Ըստ ՏՀԶԿ-ի՝ 2016 թվականին արձանագրվել է շուրջ 400 գործող ԱԸՊ սխեմաներ: Դրանց գրեթե երեք-քառորդը ներդրվել է 2001 թվականից հետո: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԱԸՊ ինստիտուտի հաջող գործարկման հիմնական շարժիչ ուժ են հանդիսացել դրա պարտադիր և օրենսդրությամբ կարգավորված լինելը:

Փաստաթղթում ներկայացվում են ԵՄ-ում ամենատարածված թափոնների խմբերի, այն է՝ տարայի, փաթեթավորման, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների, շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների և մարտկոցների համար կիրառվող ԱԸՊ սխեմաները:

1. Տարա և փաթեթավորում

Մի շարք երկրներում տարայից և փաթեթավորումից առաջացող թափոնները կազմում են կոշտ կենցաղային աղբի մոտ 30 տոկոսը քաշով և 50 տոկոսը՝ ծավալով: Ուստի, այս թափոնների կառավարումը լուծում է կոշտ կենցաղային աղբի զգալի մասի էկոլոգիապես անվտանգ գործածության խնդիրը: Սա է պատճառը, որ չնայած տարայից և փաթեթավորումից առաջացող թափոնների կառավարման գործնական բարդությանը, շատ երկրներ, այդ թվում՝ ԵՄ անդամ պետությունները, ԱԸՊ ինստիտուտի գործարկումը սկսել են հենց թափոնների այս խմբից: Ներկայումս տարայից և փաթեթավորումից առաջացող թափոնները արտադրողի ընդլայնված պատասխանատվության առարկա են հանդիսանում ԵՄ անդամ 24 պետություններում:

Մասնավորապես, ԱԸՊ սխեմաների համաձայն տարայի և փաթեթավորման թափոնների համար պատասխանատու տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են օրենսդրությամբ սահմանված տարբեր ձևաչափերով կազմակերպել և/կամ ֆինանսավորել այս թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածությունը, այդ թվում՝ դրանց վերամշակումը:

Ներկայումս, գործող ԱԸՊ սխեմանների համաձայն՝ վերը նշված պարտավորությունը ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները կարող են իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ այդ նպատակով հիմնված ԱՊԿ-ին անդամակցելու և իրենց՝ որպես արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը վերջինիս պատվիրակելու միջոցով:

ԵՄ-ում տարայի և փաթեթավորման թափոնների հավաքման և վերամշակման ցուցանիշներով առաջատար դիրք է զբաղեցնում Բելգիան, որին վերջինս հասել է ոչ միայն իր քաղաքացիների՝ թափոնների տեսակավորման պատասխանատու վարքագծի, այլ նաև այս թափոնների համար ԱԸՊ-ի պարտադիր լինելու շնորհիվ: Ավելին, Բելգիայում սպառողական և առևտրային տարայի թափոնները տարանջատված են և յուրաքանչյուրի համար գործում է մեկական ԱՊԿ, որոնք պատասխանատու են երկրի ողջ տարածքում առաջացող համապատասխան սպառողական կամ առևտրային տարայի և փաթեթավորման թափոնի խմբի համար:

Այս ԱՊԿ-ների գործունեության արդյունքում 2020 թվականին Բելգիայում վերամշակվել է 764,122 տոննա սպառողական տարայի և փաթեթավորման թափոն, որը կազմում է երկրի թափոնների այս խմբի 94,9 %-ը:

Բելգիայի օրինակին զուգահեռ հարկ է նշել, որ ԵՄ որոշ երկրներում, մասնավորապես Դանիայում, Նիդերլանդներում և Հունգարիայում տարայի և փաթեթավորման թափոնների մասով կիրառվում են նաև հարկման և դեպոզիտային վերադարձի համակարգեր, որոնք ամբողջությամբ չեն համարվում արտադրողի ընդլայնված պատասխանատվության «դասական» համակարգ, այլ համարվում են այս ինստիտուտի օժանդակ գործիքներ:

ԷԷՍ թափոններ

ԷԷՍ թափոնների մասով արտադրողների ընդլայնված պատասխանատվության սխեմաները սահմանվել են ԵՄ 25 անդամ պետություններում:

Թեև արտադրողներից գանձվող փաստացի վճարների վերաբերյալ տվյալները հասանելի չեն, սակայն ԷԷՍ թափոնների ԱԸՊ սխեմաներում վճարները հիմնականում գանձվում են ըստ արտադրողների կողմից օտարված ապրանքի քանակի (կա՛մ ըստ միավորի, կա՛մ ըստ կշռի՝ կիլոգրամի/տոննայի): Այս մոտեցումը երաշխավորում է արտադրողի կողմից ԱԸՊ վճարների վճարումը տվյալ անդամ-պետության շուկայում իր կողմից վաճառվող ԷԷՍ-ների մասնաբաժնին համարժեք:

Ինչ վերաբերում է ԷԷՍ թափոնների կառավարման արդյունավետությանը, ապա թափոնների հավաքման միջին ցուցանիշը 2020 թվականին կազմել է 45,9 %: Այս ցուցանիշը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 2020 թվականին նախորդող երեք տարիներին վաճառված ԷԷՍ-ների միջին քաշը: Այս ցուցանիշը գրեթե երկու անգամ բարձր է 2006 թվականի ցուցանիշից, որը կազմել է 23%:

ՇԴԵՏՄ-ներ

ՇԴԵՏՄ-ների մասով արտադրողների պատասխանատվության սխեմաներ գործում են ԵՄ 24 անդամ պետություններում: Նշված բոլոր սխեմաներում տրանսպորտային միջոցի վերջնական սեփականատերը պետք է հնարավորություն ունենա տրանսպորտային միջոցը անվճար հանձնել վերամշակման բոլոր այն դեպքերում, քանի դեռ այն չի ձևափոխվել կամ ապամոնտաժվել:

Մի շարք անդամ-պետություններում (Բելգիա, Նիդերլանդներ, Դանիա, Հունաստան, Բուլղարիա, Լատվիա, Լիտվա, Պորտուգալիա) գործում են կազմակերպություններ կամ «էկո-օրգանիզմներ», որոնք համակարգում են ՇԴԵՏՄ-ների վերադարձը կամ օգտահանումն արտադրողների հաշվին:

Այսպիսով, Նիդերլանդներում կիրառվում է կենտրոնացված մոդել մեկ ԱՊԿ-ով, որը ստեղծվել է տարբեր շահագրգիռ կողմերի, մասնավորապես տրանսպորտային միջոցների դիլերային ընկերությունների, ներմուծողների, ՇԴԵՏՄ ապամոնտաժող ընկերությունների և վերանորոգման կետերի կողմից: Այս մոդելի համաձայն տրանսպորտային միջոցներ արտադրողները, ներմուծողները վաճառված յուրաքանչյուր մեքենայի համար ԱՊԿ-ին վճարում են ԱԸՊ վճար: ԱՊԿ-ն, իր հերթին, այս վճարներից գոյացած միջոցներով ձեռք է բերում ծառայություններ մասնագիտացված կազմակերպություններից՝ ապահովելու ՇԴԵՏՄ-ների գործածությունը, այդ թվում՝ հավաքումը, կրկնօգտագործումը, վերամշակումը, օգտահանումը և այլն: Ավելին, այս վճարներից որոշ մասհանումներ են արվում, որոնք, որպես խրախուսանք, վճարվում են տրանսպորտային միջոցների սեփականատերերին ՇԴԵՏՄ-ը հետ վերադարձնելու համար:

Գերմանիան որդեգրել է պատասխանատվությունը բոլոր շահակիր կողմերի միջև բաշխելու մոտեցումը: Մասնավորապես, տրանսպորտային միջոցների սեփականատերերը պարտավոր են հետ վերադարձնել ՇԴԵՏՄ-ները հատուկ լիցենզավորված հաստատություններ, իսկ տրանսպորտային միջոցներ արտադրողները և ներմուծողները պարտավոր են ստեղծել ՇԴԵՏՄ-ների հավաքման և ապամոնտաժման բավարար քանակությամբ լիցենզավորված հաստատություններ: ՇԴԵՏՄ-ների մասով ներկայումս Գերմանիայում չկա որևէ ԱՊԿ, և արտադրողները/ներմուծողներն օրենսդրությամբ ստանձնած իրենց պարտավորությունները կատարում են հավաքման և ապամոնտաժման հաստատությունների հետ կնքված պայմանագրերի հիմքով:

ԵՄ անդամ պետությունների կողմից ՇԴԵՏՄ-ների համար ԱԸՊ վճարները հաշվարկվում են տարբեր մոտեցումներով:

Օրինակ.

- Չեխիայում օգտագործված տրանսպորտային միջոց գրանցելու պարագայում՝ տվյալ տրանսպորտային միջոցի շահագործման համար գանձվող վճարը սահմանվում է ԵՄ չափանիշներով:
- Դանիայում արտադրողը/ներմուծողը տարեկան գումար է վճարում մեքենայի սեփականատիրոջը՝ տրանսպորտային միջոցն ապամոնտաժման ուղարկելու պարագայում դրա համար անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորելու համար:
- Ֆինլանդիայում արտադրողը/ներմուծողը վճարում է միանվագ ԱՊԿ անդամակցության վճար և յուրաքանչյուր վաճառված մեքենայի համար ցածր սակագին:
- Պորտուգալիայում վճարի չափը հաշվարկվում է վաճառված մեքենաների քանակի հիման վրա:
- Սլովակիայում վճարի չափը հաշվարկվում է ըստ ՇԴԵՏՄ-ի քաշի, որը փոխանցվում է հատուկ ստեղծված վերամշակման ֆոնդին:

Մարտկոցներ և կուտակիչներ

Մարտկոցների համար ԱԸՊ սխեմաներ գործում են ԵՄ 24 անդամ պետություններում: Արտադրողներից վճարները գանձվում են՝ ըստ վաճառված մարտկոցների քանակի:

Անդամ պետությունները վճարները սահմանում են ըստ մարտկոցի տեսակի: Մարտկոցների դասակարգումը տարբեր է յուրաքանչյուր երկրում (օր. կենցաղային/տրանսպորտային միջոցի/արդյունաբերական մարտկոցներ):

Ավստրիան և Լիտվան վճարները սահմանում են՝ ըստ մարտկոցի քիմիական բաղադրության (օր. կապարաթթու/նիկել-կադմիում/ալկալային/ցինկ ածխածին/լիթիում/լիթիում իոն), Պորտուգալիան և Լատվիան՝ ըստ մարտկոցի չափի և քաշի:

Այլ թափոնի խմբեր

ԱԸՊ սխեմաները կիրառվում են նաև այլ թափոնների մասով՝ սկսած անվադողերից և թղթից/ստվարաթղթից (առավել հաճախ) մինչև լուսաքիմիական նյութեր (հազվադեպ):

Նշված «այլ» նյութերի մասով արտադրողի ընդլայնված պատասխանատվության սխեմաներն առավել տարածված են անվադողերի, թղթի/ստվարաթղթի, յուղերի, այդ թվում՝ հանքային, շարժիչի, սննդային և քսայուղերի օգտահանման համար, ինչպես նաև ժամկետանց և չօգտագործված դեղորայքի հավաքման և ոչնչացման համար:

4.2. ԵԱՏՄ երկրներ և Վրաստան

ԵԱՏՄ երկրների և Վրաստանի ԱԸՊ համակարգեր և սխեմաներ կիրառելու փորձին ծանոթանալու համար տես Հավելված Զ-ում ներկայացված տեղեկանքը:

5. Հայաստանում ԱԸՊ համակարգի ներդրման իրավական հիմքերը և նպատակները

ԱԸՊ-ի ներդրման առաջնային նպատակն է ստեղծել բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, կազմակերպական և տեղեկատվական կառուցակարգերի համակարգ, որով կընդլայնվի ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունը՝ ապահովելու իրենց կողմից ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված և սպառված ԱԸՊ ապրանքներից (արտադրանքից) առաջացող հատուկ թափոնների մասնակի կամ ամբողջական էկոլոգիապես անվտանգ գործածությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Որպես ԱԸՊ համակարգի ներդրման հեռահար նպատակ, հարկ է նշել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրության նախագծման փուլում այնպիսի մոդելների որդեգրումը, որոնք թույլ կտան կրճատել ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից կամ

օգտագործումից առաջացող թափոնների քանակը, խթանել թափոնների կրկնօգտագործումը, բարձրացնել դրանց վերամշակելիությունը և նվազագույնի հասցնել դրանց բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Արդյունավետ գործող ԱԸՊ համակարգը կապահովի մի շարք բնապահպանական, տնտեսական, առողջապահական և սոցիալական օգուտներ, ինչպես նաև կնպաստի երկրի միջազգային վարկանիշի բարձրացմանը:

ԱԸՊ-ի ներդրումը ուղղված է նաև Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) մի շարք դրույթների իրականացմանը, մասնավորապես.

- 104.2 Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգությանը համապատասխան թափոնների կառավարման պլանների և թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերի կազմմանը,
- 104.3 «Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանմանը:

ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 666-Լ որոշման համաձայն՝ «աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմ սահմանելու վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականը:

Ավելին, ԱԸՊ-ի ներդրումը կնպաստի ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «Աղբահանության ոլորտի ռազմավարության և վերջինիս կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագրի» իրականացմանը, մասնավորապես՝

1) աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավումը.
3) աղբահանության ծառայություն մատուցող-սպառող հարաբերությունների կարգավորումը.
4) աղբահանության ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների ներդնումը.
5) հանրապետության տարածքում աղբի պատշաճ հավաքման, տեղափոխման ու հեռացման, ինչպես նաև աղբավայրերի շահագործման նպատակով համապատասխան հագեցվածությամբ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավումը.
6) շրջանաձև տնտեսության գործիքների կիրառումը.
7) գոյացող աղբի քանակի կրճատումը սկզբնաղբյուրում.
8) կրկնակի օգտագործման կամ վերաօգտագործման, վերամշակման, վերականգնման և օգտահանման ենթակա թափոնների տեսակավորված հավաքման մեխանիզմների ներդնումը.
9) աղբի կրկնօգտագործման, վերամշակման, օգտահանման և էներգիայի վերականգնման գործողությունների կիրառումը և դեպի աղբավայր հեռացվող թափոնների քանակի կրճատումը.
10) աղբավայրում տեղադրվող կենսաբանական քայքայման ենթակա թափոնների քանակի նվազեցումը.
11) աղբի տեսակավորված հավաքման և դրա կրկնօգտագործման, վերամշակման, օգտահանման համար խթանիչ մեխանիզմների կիրառումը:

ԱԸՊ-ի ներդրումը Հայաստանում նաև կստեղծի մեխանիզմներ, որոնք.

- կնվազեցնեն առաջացող թափոնների ծավալը,
- կապահովեն հատուկ թափոնների կառավարման, այդ թվում՝ էկոլոգիապես անվտանգ գործածության համար ինստիտուցիոնալ և ֆինանսական լրացուցիչ ռեսուրսներ,
- կխթանեն «աղտոտողը վճարում է» սկզբունքի ավելի լայն և արդյունավետ կիրառումը,
- կօժանդակեն ՏԻՄ-երին բարելավել թափոնների կառավարումը և բեռնաթափել աղբահանության տեղական համակարգերի աշխատանքները,
- կօժանդակեն երկրում թափոններ վերամշակող արդյունաբերությանը,
- կօգնեն երկրում անցնել շրջանաձև տնտեսության,
- կօգնեն կրճատել աղբավայր տեղափոխվող թափոնների ծավալները՝ միաժամանակ նվազեցնելով նաև շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները,
- կխթանեն թափոնների կառավարման ոլորտում զբաղվածության բարձրացումը և այդ ոլորտում աշխատանքային հարաբերությունների կարգավորումը,
- կբարձրացնեն բնակչության կենսամակարդակը՝ նվազեցնելով հանրային առողջության ռիսկերը, բարձրացնելով նաև հանրային իրազեկվածությունը,
- կխթանեն սպառողների և արտադրողների վարքագծի փոփոխությունները:

Հավելված Դ-ում ներկայացված է ՀՀ-ում առաջարկվող ԱԸՊ ինստիտուտի ներդրման օրենսդրական կառուցվածքի նախագիծը:

6. Հիմնական դրույթներ

Ստորև ներկայացված ԱԸՊ համակարգերի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմնական բաղադրիչների ներդրումը և դերակատարների իրավունքների և պարտավորությունների սահմանումը ենթադրում է տարբեր ձևաչափեր և լուծումներ, որոնց ընտրությունը պայմանավորված է երկրի օրենսդրական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական և ենթակառուցվածքային առանձնահատկություններով: ԱԸՊ ինստիտուտի ներդրման ներկայացված տարբերակների քննարկումները բազմաշահակիր կողմերի ներգրավմամբ կապահովեն որոշումների կայացման ավելի արդյունավետ և թափանցիկ գործընթաց:

ԱԸՊ ինտիտուտի գործառումը և հիմնական դերակատարների համագործակցությունը սխեմատիկ պատկերված է Հավելված Ա-ում՝ ԱԸՊ համակարգի հիմնական դերակատարներ և գործընթացներ:

6.1. Հատուկ թափոնի խումբ

Հատուկ թափոնի խումբը որոշակի ապրանքների սպառման կամ օգտագործման արդյունքում գոյացող հատուկ թափոնների ամբողջությունն է:

ԱԸՊ օրենսդրությունը կարգավորում է միայն հատուկ թափոնի խմբերի էկոլոգիապես անվտանգ գործածությունը, որոնք սահմանվում են օրենսդրությամբ:

Հատուկ թափոնի խմբերը սովորաբար ներառում են տարայի և փաթեթավորման, մարտկոցների և կուտակիչների, ԷԷՍ-ի թափոններ, ինչպես նաև անվադողերի, ՇԴԵՏՄ-ի, օգտագործված յուղերի, օդի և յուղերի օգտագործված զտիչների և տեքստիլի թափոններ:

ԱԸՊ սխեմաներում որևէ թափոնի խումբ ներառելը հաճախ խթանում է վերջինիս գործածության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը:

ԱԸՊ սխեմաներում հատուկ թափոնի խմբերի ընտրությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- թափոնի խմբի կարևորությունը **քանակի** առումով, մասնավորապես՝ թե այդ թափոնի խումբը երկրում գոյացող թափոնների ընդհանուր ծավալում քանի տոկոսն է կազմում,
- թափոնի խմբի **հատկանիշները**՝ արդյոք թափոնները վտանգավոր, թե ոչ վտանգավոր են, ինչ ծագում ունեն,
- որքանով է հնարավոր **նույնականացնել** արտադրողին,
- տվյալ թափոնի խումբը չկառավարելու դեպքում դրա ունեցած բնապահպանական, կլիմայական, սոցիալական, տնտեսական **ազդեցությունը,**
- թափոնի խմբի կառավարման **տնտեսական** ասպեկտները, մասնավորապես՝ թափոնների վերամշակման տնտեսական ներուժը,
- միջազգային փորձը,
- թափոնների խմբի կառավարմանը մասնակցելու երկրի և **բնակչության պատրաստվածության մակարդակը** (օր. սկզբնաղբյուրում թափոնի տեսակավորման մասին իրազեկության մակարդակ և այլն),
- թափոնի խմբի գործածության՝ հավաքման, վերամշակման, օգտահանման, մշակման, հեռացման համար անհրաժեշտ **ենթակառուցվածքների առկայությունը** և դրանց զարգացման ներուժը:

Կարևոր է նշել, որ եթե տվյալ թափոնի խումբը ԱԸՊ սխեմաներում ներառելը հիմնավորվել է մի շարք երկրներում (ինչպես օրինակ, տարայի և փաթեթավորման, անվադողերի, մարտկոցների և կուտակիչների, ԷԷՍ թափոնների խմբերը), ապա նույն հիմնավորումները հավանաբար օրինաչափ կլինեն նաև այն երկրներում, որոնք ԱԸՊ սխեմաները ներդնելու փուլում են, օրինակ՝ Հայաստանում:

ԵՄ-ում ԱԸՊ սխեմաներում ներառելու համար պարտադիր թափոնի խմբեր են համարվում՝ մարտկոցների և կուտակիչների, ԷՍՍ և շուտով՝ ՇԴԵՏՄ թափոնի խմբերը: Արևային վահանակների, տեքստիլի և՛ քանակական, և՛ որակական իմաստով խնդրահարույց թափոններ առաջացնող այլ ապրանքերը ևս կարող են ներառվել ԱԸՊ սխեմաներում՝ առանձին ԵՄ անդամ երկրների հայեցողությամբ:

Հայաստանում նախընտրելի հատուկ թափոնի խմբեր

Հաշվի առնելով ԵՄ-ում՝ ԱԸՊ սխեմաներում հատուկ թափոնի խմբերի ընտրությունը պայմանավորող վերոնշյալ գործոնները, ինչպես նաև ելնելով ՀՀ-ում առկա օրենսդրական, ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական և ենթակառուցվածքային առանձնահատկություններից, առաջարկվում է Հայաստանում ԱԸՊ ինստիտուտի ներդրումը սկսել թափոնների հետևյալ խմբերից՝

- տարայի և փաթեթավորման թափոն,
- անվադողերի թափոն,
- օգտագործված յուղերի (նաև օդի և յուղերի օգտագործված զտիչների) թափոն,
- մարտկոցների և կուտակիչների թափոն,
- ԷԷՍԹ,
- ՇԴԵՏՄ:

Թափոնի խմբերի ավելի հիմնավորված ընտրության նպատակով սույն փաստաթղթի Հավելված Բ-ում ներկայացվում է առաջարկված վեց թափոնի խմբերի գնահատման աղյուսակ ըստ հինգ չափանիշների՝ շրջակա միջավայրի և կլիմայի վրա ազդեցություն, տեսակավորված հավաքման ենթակառուցվածքի կամ մեխանիզմների առկայություն կամ ներուժ, վերամշակման, մշակման, օգտահանման, վնասազերծման ենթակառուցվածքի առկայություն կամ ներուժ, տնտեսական ազդեցություն և ներուժ, այլ ասպեկտներ, օրինակ՝ էներգետիկ անվտանգություն, հումքի պաշարներ և այլ:

Հայաստանում ԱԸՊ ինստիտուտի ներդրումը այս թափոնների ներառմամբ կարող է իրականացվել փուլային եղանակով՝ հետագայում ընդգրկելով այլ թափոնների խմբեր ևս:

6.2. ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտ

Ընդհանուր նկարագրություն

Արտադրողի ընդլայնված պատասխանատվության իմաստով, տնտեսվարող սուբյեկտ է հանդիսանում ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) առաջին օտարումն իրականացնողը:

Տարընթերցումներից խուսափելու նպատակով հարկ է նշել, որ տարա և փաթեթավորում արտադրողները չեն հանդիսանում ԱԸՊ ինստիտուտի սուբյեկտ և չեն կրում այս ինստիտուտից բխող պարտավորություններ: Օրինակ՝ շիշ արտադրող ընկերությունը չի հանդիսանում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտ, այս պարագայում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտ է հանդիսանում այն տնտեսվարողը, որն իրականացնում է շշալցում և շշալցված ապրանքը հանում է շուկա:

Ինչ վերաբերվում է ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) ՀՀ տարածքում օտարերկրյա մատակարարի կողմից առցանց իրացմանը, ապա այդ ապրանքից (արտադրանքից) գոյացող թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության պարտավորությունը ԱԸՊ ինստիտուտի շրջանակներում պետք է ստանձնի օտարերկրյա մատակարարի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում:

Փոքր արտադրող

Որոշ երկրներ իրենց ԱԸՊ օրենսդրությամբ սահմանում են նաև “փոքր արտադրող” հասկացությունը: Փոքր արտադրող է հանդիսանում այն արտադրողը կամ ներմուծողը, որի կողմից երկրում վաճառված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) քանակը չի գերազանցում ԱԸՊ օրենսդրությամբ սահմանված որոշակի շեմը: Սակայն հաշվի առնելով ՀՀ շուկայի ծավալները, թերևս, փոքր արտադրողի համար որոշակի շեմ սահմանելը արդարացված չի լինի:

«Անբարեխիղճ» տնտեսվարող սուբյեկտ (free rider)

Միջազգային պրակտիկայում այս եզրույթով բնորոշում են ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) այն արտադրողներին կամ ներմուծողներին, որոնք չեն անդամակցում որևէ ԱՊԿ-ի, անհատապես չեն իրականացնում իրենց ԱԸՊ-ից բխող պարտավորությունները՝ դրանով խուսափելով պատասխանատվությունից և իրենց կողմից վաճառված ԱԸՊ ապրանքներից (արտադրանքից) գոյացող թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության համար ԱԸՊ վճար վճարելուց: Ուստի, ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն վերահսկողության, հաշվետվողականության և կանխարգելիչ այնպիսի մեխանիզմեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ողջամիտ ժամկետներում բացահայտել նման տնտեսվարող սուբյեկտների:

ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի ընդհանուր պարտավորություններ

ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի պարտավորություններն են.

- ապահովել իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) սպառումից կամ օգտագործումից գոյացած հատուկ թափոնի **հավաքումը,** ներառյալ անվճար **վերադարձը** մանրածախ առևտրի կետերից և այլ վայրերից,
- օրենսդրությամբ սահմանված կարգով **անդամակցել** ԱՊԿ-ին,
- իրականացնել իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքից (արտադրանքից) գոյացած հատուկ թափոնի հավաքման, վերամշակման, մշակման, օգտահանման, վնասազերծման **ապահովման համար անհրաժեշտ ԱԸՊ վճարների վճարումը,**
- իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից կամ օգտագործումից գոյացող հատուկ թափոնների մասնաբաժնին համարժեք ապահովել դրանց վերամշակման կամ վնասազերծման **ազգային թիրախներին** հասնելը,
- ներկայացնել **հաշվետվություններ** լիազոր մարմնին կամ ԱՊԿ-ին ՀՀ տարածքում իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) քանակների և դրանց սպառումից կամ օգտագործումից գոյացած հատուկ թափոնի ծավալների վերաբերյալ:

ԱԸՊ համակարգում կիրառվող հաշվետվությունների մեխանիզմներին ավելի մանրամասն ծանոթանալու համար տես Հավելված Գ - Հաշվետվողականությունը ԱԸՊ համակարգում:

Միջազգային պրակտիկայում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն իրենց ընտրությամբ արտադրողի ընդլայնված պատասխանատվության պարտավորությունների կատարումն իրականացնում են հետևյալ տարբերակներով.

1. հիմնադրում են ԱՊԿ, այնուհետև պայմանագրային հիմունքներով վերջինիս պատվիրակում են արտադրողի ընդլայնված պատասխանատվությունից բխող իրենց պարտավորության կատարումը, որի համար որպես մատուցվող ծառայության գին՝ վճարում են ԱԸՊ վճար, կամ
2. պայմանագրային հիմունքներով անդամակցում են գործող ԱՊԿ-ին և վերջինիս պատվիրակում են արտադրողի ընդլայնված պատասխանատվությունից բխող իրենց պարտավորության կատարումը, որի համար որպես մատուցվող ծառայության գին՝ վճարում են ԱԸՊ վճար,
3. անհատապես՝ առանց որևէ ԱՊԿ հիմնելու կամ դրան անդամակցելու իրականացնում են իրենց ԱԸՊ պարտավորություններն այն դեպքում, երբ իրենց կողմից Հայաստանում օտարված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) սպառումից կամ օգտագործումից գոյացող հատուկ թափոնի ծավալները համապատասխանում են օրենսդրությամբ նախատեսված

նվազագույն սահմանաչափին կամ օրենսդրությամբ նախատեսված այլ պայմանների դեպքում, կամ

4. որևէ ԱՊԿ-ի չանդամակցելու կամ ԱԸՊ պարտավորություններն անհատապես չկատարելու դեպքում պետական բյուջե են վճարում բնապահպանական հարկ, որը միջազգային պրակտիկայում մի քանի անգամ գերազանցում է ԱԸՊ վճարը:

Բոլոր ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները պետք է գրանցվեն լիազոր մարմնի (օր. ՇՄՆ) կողմից վարվող ռեեստրում՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:

Ինչ վերաբերվում է Հայաստանում որևէ իրավական ներկայություն չունեցող, սակայն ՀՀ տարածք հեռավար/առցանց եղանակով ԱԸՊ ապրանք (արտադրանք) արտահանողներին, ապա միջազգային փորձի համաձայն, այդ ապրանքները երկիր ներմուծող առևտրային ներկայացուցչությունները կարող են դիտարկվել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտ:

Ֆինանսական պարտավորություններ

Ակնհայտ է, որ ցանկացած թափոնի էկոլոգիապես անվտանգ գործածությունը հնարավոր է ապահովել համապատասխան ենթակառուցվածքների և բավարար ֆինանսական միջոցների առկայության դեպքում: ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական պարտավորությունները տարբեր են՝ պայմանավորված վերջինիս կողմից ընտրված ԱԸՊ մոդելով: Մասնավորապես, ինչպես ներկայացված է Փաստաթղթի 6.3 կետում ԱԸՊ անհատական մոդելի դեպքում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտն ինքն է ամբողջությամբ ֆինանսավորում իր կողմից օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից առաջացող թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածությունը: Ինչ վերաբերվում է ԱԸՊ խմբային մոդելը ընտրած ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտին, ապա վերջինս որպես ծառայության վճար պարտավոր է ԱՊԿ-ին վճարել իր կողմից շուկա դուրս բերված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) ծավալին համապատասխան հաշվարկված ԱԸՊ վճար:

Միաժամանակ, միջազգային պրակտիկայում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներին տրված է նաև ԱԸՊ որևէ սխեմայի չմիանալու հնարավորություն, որի դեպքում տվյալ տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է այդ երկրի օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով վճարել բնապահպանական հարկ: Հատկանշական է, որ այս դեպքում բնապահպանական հարկի դրույքաչափը մի քանի անգամ ավելի բարձր է, քան ԱԸՊ վճարը (օրինակ՝ Կիպրոսում ԱԸՊ բնապահպանական հարկը նվազագույնը հինգ անգամ գերազանցում է ԱԸՊ վճարը): Այս մոտեցումն, ըստ էության, հետապնդում է երեք հիմնական նպատակ.

1) խրախուսել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներին իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից առաջացող հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության իրականացումը ԱԸՊ որևէ մոդելի միջոցով,
2) հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության համար ունենալ ֆինանսական միջոցների գոյացման առանձին աղբյուր և առանձին մասնավոր պատասխանատու մարմին՝ ի դեմս ԱՊԿ-ի, ինչը թույլ կտա բարձրացնել հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության մակարդակը՝ միաժամանակ այս առնչությամբ չծանրաբեռնելով պետական մարմիններին,

3) կանխարգելել տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ վարքագիծը. այն դեպքում, երբ ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտը թաքցնում կամ թերի է հայտարարագրում իր կողմից շուկա դուրս բերվող ԱԸՊ ապրանքերի (արտադրանքի) իրական ծավալները, ապա չհայտարարագրված կամ թերի հայտարարագրված ԱԸՊ ապրանքերի (արտադրանքի) ծավալի նկատմամբ հաշվարկվում և ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի կողմից վճարվում է բնապահպանական հարկ:

Բնապահպանական հարկը կամ ԱՊԿ-ին վճարվող ԱԸՊ վճարը սահմանվում է յուրաքանչյուր հատուկ թափոնի տեսակի համար՝ ըստ ծավալի (օր. դրամ/կգ կամ դրամ/տոննա): Միջազգային պրակտիկայում օրենսդրությամբ սահմանվում է յուրաքանչյուր հատուկ թափոնի տեսակի համար ԱԸՊ վճարի ստորին շեմ: Սրա նպատակն է նվազեցնել ԱՊԿ-ի կողմից իր պարտավորությունները չկատարման ռիսկերը: Ամեն դեպքում, ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից ԱՊԿ-ին կամ պետական բյուջե վճարված համապատասխանաբար ԱԸՊ վճարը կամ բնապահպանական հարկի գումարը պետք է ծախսվեն **բացառապես** թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության նպատակով:

ՀՀ-ում ԱԸՊ ինստիտուտի ներդրման ֆինանսա-հարկային մոտեցումը

Հայաստանի պարագայում ԱԸՊ ինստիտուտի ներդման սկզբնական փուլում կարող է դիտարկվել միայն ԱԸՊ վճարի սահմանման տարբերակը, որի դեպքում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն չեն ունենա բնապահպանական հարկ վճարելու միջոցով ազատվել ԱԸՊ պարտավորությունները կատարելուց: Այլ կերպ ասած, ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն իրենց ԱԸՊ պարտավորությունները կիրականացնեն կա՛մ անհատական, կա՛մ խմբային մոդելի միջոցով: Հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածությունը միայն ԱԸՊ որևէ մոդելի միջոցով իրականացնելու մոտեցումը կնպաստի ԱԸՊ ինստիտուտի ներդրմանը և դրա կենսագործումը ապահովող անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը համեմատաբար ավելի կարճ ժամկետներում: Միաժամանակ, այս մոտեցման արդյունքում Պետական եկամուտների կոմիտեն և թափոնների գործածության ոլորտի լիազորված պետական մարմինները չեն ծանրաբեռնվի համապատասխանաբար բնապահպանական հարկի հավաքագրմամբ և հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության ապահովմամբ:

Ինչ վերաբերվում է բնապահպանական հարկին, ապա ՀՀ հարկային օրենսգրքի 161-րդ հոդվածի համաձայն բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է: Ընդ որում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 171-րդ հոդվածով որոշ ԱԸՊ ապրանքներ (արտադրանք), օրինակ՝ անավադողեր, սնդիկային լամպեր, մարտկոցներ, արդեն իսկ դիտարկված են որպես շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ և հարկվում են բնապահպանական հարկով:

Նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ այս ապրանքների մասով պետական բյուջե վճարվող բնապահպանական հարկն ըստ էության որոշ առումներով հետապնդում է այն նույն նպատակը, ինչ հետապնդելու է այս ապրանքների համար ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվելիք ԱԸՊ վճարը: Սրանով հանդերձ, բնապահպանական հարկի նպատակային օգտագործումն ապահովող կառուցակարգերի բացակայությունը գործնականում անհնար է

դարձնում բնապահպանական հարկի գծով հավաքագրված բյուջետային եկամուտների հաշվին նշված խնդիրների թիրախային լուծումը:

Ավելին, ներկայումս որոշ տնտեսվարողներ անձնական սպառման համար ներմուծված և բնապահպանական հարկով հարկված ապրանքների համար (օրինակ՝ անվադող, կուտակիչ) ստիպված են սեփական միջոցների հաշվին կազմակերպել, այդ թվում՝ նաև այլ ընկերություններից ծառայություններ ձեռք բերելով, այդ ապրանքերի սպառումից (օգտագործումից) առաջացած թափոնի տեղափոխումը և վնասազերծումը:

Բացի այդ հաշվի առնելով, որ ԱԸՊ որոշ ապրանքներ (արտադրանք) արդեն իսկ սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով որպես շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ, ԱԸՊ ինստիտուտի ներդրման պարագայում անհրաժեշտ կլինի վերանայել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ցանկը և դրանց բնապահպանական հարկով հարկման պայմանները՝ բացառելով ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի կողմից նույն ապրանքի համար և՛ բնապահպանական հարկ, և՛ ԱԸՊ վճար վճարելու դեպքը:

Թիրախների ապահովման պարտավորություններ

ԱԸՊ ինստիտուտի ներդրման նպատակներից մեկն է թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության (օր. վերամշակման) համար սահմանված թիրախների ապահովումը:

Վերամշակման և վնասազերծման թիրախները կարող են սահմանվել ենթաօրենսդրական ակտերով կամ ռազմավարություններով:

Թիրախները սահմանվում են ինչպես բոլոր կոշտ կենցաղային թափոնների, այնպես էլ թափոնների առանձին խմբերի և տեսակների համար: Օրինակ, կարող է սահմանվել երկրում գոյացող կոշտ կենցաղային թափոնների 20 տոկոսը տեսակավորելու և վերամշակելու թիրախ: Թիրախը կարող է սահմանվել նաև թափոնի առանձին խմբի, օրինակ՝ երկրում գոյացող տարայի և փաթեթավորման թափոնների 40 տոկոսի տեսակավորման և վերամշակման համար: Թիրախները սահմանվում են միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, ինչպես ներկայացված է պատկեր 2-ում բերված օրինակում.



Պատկեր 2 - Թափոնների վերամշակման թիրախների օրինակ 2025-2045թթ.

Վերամշակման թիրախների ապահովման գործընթացում համայնքապետարանները, ԱՊԿ-ները և ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն ունեն իրենց դերը և պարտավորությունները: Որպես կանոն, վերամշակման թիրախները չապահովելու համար սահմանվում են տույժեր:

Համայնքապետարանները կրում են *ընդհանուր կոշտ կենցաղային թափոնների* մասով սահմանված վերամշակման թիրախներն ապահովելու պարտավորություն: Այս պարտավորությունը համայնքապետարաններին խրախուսում է աջակցել ԱԸՊ սխեմաների առավել արդյունավետ իրականացմանը, մասնավորապես՝ ԱՊԿ-ների հետ համագործակցության միջոցով:

ԱՊԿ-ները կրում են *հատուկ թափոնների առանձին խմբերի և տեսակների* մասով սահմանված վերամշակման թիրախներն ապահովելու պարտավորություն: Ընդ որում՝ թիրախների ապահովման մասով ԱՊԿ-ի պարտավորությունը որոշվում է իրեն անդամակցող տնտեսվարողների կողմից օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից կամ օգտագործումից գոյացած հատուկ թափոնների ընդհանուր ծավալներով:

Օրինակ՝ եթե ԱՊԿ-ին անդամակցած տնտեսվարողների կողմից օտարված ԱԸՊ ապրանքներից գոյացել է 10,000 տոննա հատուկ թափոն (օր.՝ ապակե տարա), որի համար սահմանված թիրախը 60% է, ապա ԱՊԿ-ն պարտավորվում է ապահովել նշված թափոնների առնվազն 6,000 տոննայի հավաքումը և վերամշակումը: Եթե ԱՊԿ-ն չի ապահովում սահմանված թիրախը, ապա փաստացի վերամշակված ծավալի ու սահմանված թիրախի տարբերության մասով տվյալ ԱՊԿ-ին անդամակցող ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները պարտավորվում են վճարել բնապահպանական հարկ:

Նշված կարգավորումը խրախուսում է տվյալ ԱՊԿ-ին անդամակցող ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներին ավելի խիստ վերահսկել ԱՊԿ-ի գործունեությունը՝ մասնավորապես թիրախների ապահովումը:

Որոշ երկրներում ԱԸՊ-ի ներդրումից որոշ ժամանակ անց կամ սկզբում ստեղծվում են **հաշվարկային պալատներ**, որոնք մասամբ վերցնում են մշտադիտարկման և վերահսկողության բեռը:

ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները, որոնք կատարում են իրենց ԱԸՊ պարտավորություններն անհատապես, ապահովում են վերամշակման թիրախները՝ իրենց կողմից երկրում վաճառված ԱԸՊ ապրանքներից գոյացող հատուկ թափոնների չափով:

ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) օտարման առանձնահատկությունները

ՀՀ օրենսդրությամբ ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սահմանված ցանկի առկայության դեպքում մեծածախ և մանրածախ վաճառք իրականացնող կազմակերպություններն իրենց առևտրի օբյեկտներում կարող են ձեռք բերել և օտարել ԱԸՊ ապրանքներ (արտադրանք) միայն **գրանցված ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներից**:

Վաճառողը պարտավոր է իր միջոցներով ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառողին տեղեկացնել օգտագործված ԱԸՊ ապրանքների հետվերադարձի համար ստեղծված համակարգերի և սպառողի հնարավորությունների (որոշ հատուկ թափոնների դեպքում՝ պարտավորության) մասին, երբ նոր ԱԸՊ ապրանքն առաքված է տուն և/կամ ունի առանձնացված տեղ այդ տարածքում, օրինակ՝ հին սառնարանի, որպես ԱԸՊ ապրանքի, հետվերադարձը: Եթե օգտագործված ԱԸՊ ապրանքի հետվերադարձը տվյալ վաճառողի մոտ հնարավոր չէ, ապա վերջինս պետք է սպառողին տեղեկացնի հանձնման ամենամոտ վայրի մասին:

Վաճառողը պետք է նաև սպառողին տեղեկացնի (այդ թվում՝ համապատասխան տարբերանշանների միջոցով) օգտագործված ԱԸՊ ապրանքները (օր. դատարկ պլաստիկ շիշ) որպես չտեսակավորված թափոն գցելու արգելքի, դրա համար սահմանված պատասխանատվության և թափոնների տեսակավորված հավաքման պարտավորության մասին (եթե այդպիսիք առկա են):

6.3. Արտադրողի պատասխանատվության կազմակերպություն

Ընդհանուր նկարագրություն

Արտադրողի պատասխանատվության կազմակերպությունը (ԱՊԿ) ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից ստեղծված կազմակերպություն է, որի նպատակն է համակարգել ԱԸՊ ապրանքներից (արտադրանքից) գոյացող հատուկ թափոնների հավաքումն ու էկոլոգիապես անվտանգ գործածությունը:

Միջազգային պրակտիկայում ԱՊԿ-ները հիմնականում ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձինք են, որոնք հիմնադրվում են նվազագույնը երկու ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ԱՊԿ-ն կարող է պատասխանատու լինել մեկ կամ ավելի թափոնի խմբի համար:

Որպես կանոն, ԱՊԿ հիմնադրելու նվազագույն պահանջ է սահմանվում երկրում հիմնադիր ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից երկրում օտարված ԱԸՊ ապրանքների սպառումից կամ օգտագործումից գոյացող հատուկ թափոնների ծավալների շեմով: Սրա նպատակն է մի կողմից խուսափել մենաշնորհներից, երբ մեկից ավելի ԱՊԿ-ների հիմնադրումը նպատակահարմար է, և մյուս կողմից՝ բացառել անարդյունավետ թվաքանակով ԱՊԿ-ների ստեղծումը:

ԱՊԿ-ն պետական կառավարման մարմիններից ստանում է լիցենզիա կամ թույլտվություն՝ ԱԸՊ պարտավորություններն իրականացնելու համար:

ԱՊԿ-ն իր պարտավորությունների կատարման նպատակով պայմանագրային հիմունքներով համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և թափոն հավաքող, տեղափոխող, վերամշակող, օգտահանող և վնասազերծող կազմակերպությունների հետ:

ԱԸՊ իրականացման մոդելներ

ա. խմբային մոդել

- *մեկ* ԱՊԿ յուրաքանչյուր հատուկ թափոնի խմբի կամ մի քանի հատուկ թափոնի խմբերի համար, որին *պետք է* անդամակցեն բոլոր ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները, որոնք չեն ընտրում բնապահպանական հարկ վճարելու տարբերակը.
  կամ
- *մի քանի* ԱՊԿ յուրաքանչյուր թափոնի խմբի կամ մի քանի թափոնի խմբերի համար: Այս դեպքում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն ԱՊԿ-ին անդամակցում են ըստ իրենց ընտրության:

Յուրաքանչյուր թափոնի խմբի կամ մի քանի թափոնի խմբերի համար ԱՊԿ-ների գործունեության թույլտվությունների առավելագույն քանակն ըստ նպատակահարմարության սահմանվում է օրենքով:

բ. անհատական մոդել

Օրենսդրությամբ նախատեսված հատուկ դեպքերում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները կարող են իրենց ԱԸՊ պարտավորություններն իրականացնել անհատապես՝ առանց ԱՊԿ հիմնելու կամ ԱՊԿ-ի անդամակցելու: Այս դեպքում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն ապահովում են միայն իրենց կողմից օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) սպառումից և օգտագործումից գոյացող հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածությունը:

Այս տարբերակն ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների համար հանդիսանում է թերևս ամենածախսատարը: Անհատական մոդելը կարող է նպատակահարմար լինել ԱԸՊ այնպիսի ապրանքների (արտադրանքի) դեպքում, որոնք չեն տարածվում սպառողների շրջանում և կարող են հեշտությամբ հավաքվել և գործածվել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտի կողմից (օրինակ՝ արտադրական փաթեթավորման որոշ տեսակներ):

Մեկ կամ մի քանի ԱՊԿ

Մեկ ԱՊԿ-ով սխեմայի առավելությունները

- մասշտաբի էֆեկտի հաշվին պակաս վարչական ծախսեր
- սխեմայի պարզություն
- առավել արդյունավետ վերահսկողություն և մշտադիտարկում պետական մարմինների կողմից, ինչի արդյունքում կբացահայտվեն հնարավոր «անբարեխիղճ» արտադրողները
- նվազ ռեսուրսատար հաշվետվողականության գործընթացներ
- թափոնների ավելի արդյունավետ հավաքում
- առավել թափանցիկ ԱԸՊ սխեմա:

Մեկ ԱՊԿ-ով սխեմայի թերությունները

- ԱԸՊ վճարի ձևավորման ոչ մրցակցային մոտեցում
- ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները չունեն այլ ԱՊԿ-ի անդամակցելու այլընտրանք, ինչի դեպքում հատկապես խոցելի կարող են դառնալ փոքր արտադրողները
- ԱՊԿ-ն կարող է պայմաններ թելադրել թափոնների գործածության կազմակերպություններին (օր. վերամշակողներին)
- համայնքը չունենալով այլընտրանք ստիպված է համագործակցել միակ ԱՊԿ-ի հետ
- շուկայում ԱՊԿ-ի մենաշնորհային դիրքի չարաշահման վտանգ:

Մի քանի ԱՊԿ-ով սխեմայի առավելությունները

- ԱՊԿ-ն շահագրգիռ է որդեգրել առավել ծախսարդյունավետ լուծումներ
- ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտներն ունեն ավելի մեծ ազդեցություն ԱՊԿ-ների վրա
- թիրախներին հասնելու մոտեցումների ճկունություն
- ԱՊԿ-ների և թափոնների գործածության կազմակերպությունների, ինչպես նաև համայնքների միջև մրցակցային միջավայր
- ԱՊԿ-ների միջև մրցակցային դաշտի ձևավորում:

Մի քանի ԱՊԿ-ով սխեմայի թերությունները

- ԱՊԿ-ի ավելի մեծ գործառնական և վարչական ծախսեր
- առավել ռեսուրսատար պետական մշտադիտարկման և վերահսկողության գործընթացներ
- «անբարեխիղճ» արտադրողների առավել բարձր ռիսկեր
- ԱՊԿ-ների համար նվազ գրավիչ համայնքները կարող են դուրս մնալ ԱԸՊ սխեմաների գործունեության տիրույթից:

ԱՊԿ-ների վերաբերյալ ընդհանուր դիտարկումներ

- ԱՊԿ-ն պետք է լինի ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կազմակերպություն
- որպես ԱՊԿ հիմնադիր հանդիսանալու պարտադիր նախապայման՝ շուկայում ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից յուրաքանչյուր հատուկ թափոնի խմբի դեպքում շուկայում օտարված համապատասխան ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) մասնաբաժնի սահմանում
- սահմանել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից ԱՊԿ-ի հիմնադրման համար հստակ կարգավորումներ

- սահմանել ԱՊԿ-ի գործառույթները, որոնց շրջանակներում ԱՊԿ-ն պատասխանատու է միայն ԱԸՊ սխեման ներդնելու և համակարգելու համար, բայց ո՛չ թափոնների գործածության, օրինակ՝ հավաքման, տեղափոխման, վերամշակման և այլնի համար:
- կարգավորել նվազագույն և առավելագույն ԱԸՊ վճարը (նվազագույն դրույքաչափը կապահովի ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից թափոնների գործածման համար ծախսերի փոխհատուցումը, մինչդեռ առավելագույնը կօգնի խուսափել վճարի անհամաչափ բարձրացումից)
- կարգավորել ԱԸՊ վճարի փոփոխման ռեժիմները՝ կախված տարբեր գործոններից, օրինակ՝ երկրորդային հումքի շուկայական գնից
- սահմանել ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների սուբսիդիար պատասխանատվությունը՝ ԱՊԿ-ի գործունեության համար, այդ թվում՝ սահմանված թիրախներին չհասնելու դեպքում
- ստեղծել հստակ և կայուն իրավական հիմք՝ բավարար վերահսկողությամբ և բոլորի համար հավասար կանոններով արդար մրցակցություն ապահովելու համար (կիրառելի է մի քանի ԱՊԿ-ի դեպքում):

ԱՊԿ-ի պարտավորությունները

ԱՊԿ-ն **պայմանագիր է կնքում բոլոր** ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների և համայնքների հետ, որոնք ցանկանում են համագործակցել տվյալ ԱՊԿ-ի հետ: Ընդ որում, ԱՊԿ-ն իր բոլոր անդամներին ծառայություններ է մատուցում հավասար պայմաններով (նույն դրույքաչափով):

ԱՊԿ-ն **ապահովում** է համապատասխան հատուկ թափոնի խմբերի համար սահմանված **վերամշակման թիրախների իրականացումն** այն չափով, որը հաշվարկվում է իրեն անդամակցող ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից երկրում օտարված ԱԸՊ ապրանքներից (արտադրանքից) գոյացող հատուկ թափոնների ընդհանուր քանակի համամասնությանը համարժեք:

ԱՊԿ-ն պայմանագրային սկզբունքով **համագործակցում է համայնքապետարանների հետ**, համայնքներում ստեղծում կամ ապահովում է ԱԸՊ ապրանքներից (արտադրանքից) գոյացող հատուկ թափոնների տեսակավորված հավաքման համար անհրաժեշտ ենթակառուցվածք այն դեպքերում, եթե այն առկա չէ:

ԱՊԿ-ն անհրաժեշտության դեպքում **նպաստում է** հատուկ թափոնների վերամշակման, օգտահանման կամ վնասազերծման **ենթակառուցվածքի** ստեղծմանը կամ բարելավմանը:

ԱՊԿ-ն իրականացնում է **հանրային իրազեկում և հաղորդակցություն:** Միջազգային պրակտիկայում հաճախ օրենսդրությամբ սահմանվում է հանրային իրազեկման և հաղորդակցության վրա ծախսվելիք իր հասույթի նվազագույն և առավելագույն շեմերը, հատկապես ԱՊԿ-ի գործունեության սկզբնական փուլում:

ԱՊԿ-ն **չի իրականացնում թափոնների գործածության** (հավաքման, տեղափոխման, վերամշակման, օգտահանման, վնասազերծման) գործառույթներ: Այդ գործառույթները ԱՊԿ-ն պատվիրակում է թափոնների գործածության լիցենզավորված օպերատորներին պայմանագրային հիմունքներով:

ԱՊԿ-ն լիազոր մարմնին **ներկայացնում է տարեկան հաշվետվություն** իրեն անդամակցող ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից երկրում օտարված ԱԸՊ ապրանքի (արտադրանքի) սպառումից և օգտագործումից գոյացած հատուկ թափոնների ծավալների և համապատասխան թիրախների ապահովման վերաբերյալ: Այս մասով ԱՊԿ-ին անդամակցող ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտները լիազոր մարմնին հաշվետվություն չեն ներկայացնում:

Հայաստանի դեպքում ԱՊԿ-ի նախընտրելի կազմակերպական-իրավական ձևերի համեմատական վերլուծություն

Միջազգային պրակտիկայում ԱՊԿ-ները առավելապես շահույթ չհետապնդող իրավաբանական անձինք են, ուստի, հիմք ընդունելով իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևի վերաբերյալ ՀՀ օրենսդրական կարգավորումները, որպես ԱՊԿ-ի կազմակերպական-իրավական ձև՝ Հավելված Ե-ում ներկայացվում են ոչ առևտրային կազմակերպություններից՝ հիմնադրամի և ոչ առևտրային կոոպերատիվի կազմակերպական-իրավական ձևերի համեմատական վերլուծությունը:

Հայաստանի համար ԱՊԿ-ների թվի նախընտրելի մոտեցում

Միջազգային փորձագետների գնահատմամբ՝ Հայաստանի պարագայում ԱԸՊ ինստիտուտի գործառման սկզբնական շրջանում նպատակահարմար է յուրաքանչյուր հատուկ թափոնի խմբի (կամ խմբերի խմբավորումների) համար ունենալ մեկ ԱՊԿ, ինչը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել դրա գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև բացառել «անբարեխիղճ արտադրողների» կողմից ստվերում գործելը:

6.4. Թափոնների գործածության կազմակերպություններ

Թափոնների հավաքման, տեղափոխման օպերատորները, վերամշակման, օգտահանման և վնասազերծման լիցենզավորված կազմակերպությունները ԱԸՊ սխեմաներում հանդիսանում են կենտրոնական դեր ունեցող և շահույթ ստացող օղակներից մեկը: Հայտնի է, որ ԱԸՊ սխեմաների ներդրումը զգալիորեն նպաստում է երկրում թափոնների վերամշակման ճյուղի զարգացմանը, ինչի արդյունքն է երկրի աստիճանական անցումը շրջանաձև տնտեսության, կանաչ տնտեսության ռազմավարության իրականացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և երկրի միջազգային բնապահպանական վարկանիշի բարձրացումը:

ԱԸՊ սխեմաներում թափոնների գործածության լիցենզավորված կազմակերպությունները չունեն որևէ պարտավորություն և համագործակցում են ԱՊԿ-ների հետ պայմանագրային սկզբունքով՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում:

6.5. Շրջակա միջավայրի նախարարություն

Միջազգային պրակտիկայում ԱԸՊ ինստիտուտի լիազոր մարմինը (որոշ դեպքերում այլ գերատեսչությունների հետ միասին) իրականացնում է հետևյալ գործառույթները.

- մշակում և կառավարության հաստատմանն է ներկայացնում հատուկ թափոնների գործածության համապատասխան թիրախները
- իրականացնում է սահմանված թիրախների ապահովման մշտադիտարկում
- վարում է ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների և ԱՊԿ-ների ռեեստրը
- տրամադրում է թույլտվություն ԱՊԿ-ներին
- տրամադրում է լիցենզիա հատուկ թափոնների գործածության կազմակերպություններին
- ստանում և ամփոփում է ԱՊԿ-ների կողմից տրամադրված հաշվետվությունները
- պատրաստում և հրապարակում է տարեկան հաշվետվություններ, որոնք ներառում են՝
    - տեղական շուկայում օտարված ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) ընդհանուր ծավալը
    - ԱԸՊ ապրանքների (արտադրանքի) ընդհանուր ծավալում յուրաքանչյուր ԱՊԿ-ի բաժնեմասը
    - ԱԸՊ տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարված ԱԸՊ վճարի չափը
    - հատուկ թափոնների գործածության թիրախների ապահովման չափը
    - թիրախների չապահովման դեպքում կիրառված միջոցառումները
    - օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն:

6.6. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Միջազգային պրակտիկայում ԱԸՊ սխեմաներում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- պայմանագրային հիմունքներով համագործակցում են ԱՊԿ-ների հետ
- ապահովում են թափոնների գործածության ոլորտում սահմանված թիրախները
- ԱՊԿ-ի հետ համատեղ ապահովում են թափոնների հավաքման ենթակառուցվածքի ստեղծումը (եթե առկա չէ), բարելավումը և շահագործումը
- ԱՊԿ-ի հետ համատեղ իրականացնում են հանրային իրազեկում
- գոյություն ունեցող տեսակավորված հավաքման համակարգի դեպքում կարող է պահանջել դրամական կամ այլ փոխհատուցում՝ իր տարածքում գոյացող հատուկ թափոնների տրամադրման դիմաց:

Հավելված Ա - ԱԸՊ համակարգի հիմնական դերակատարներ և գործընթացներ



Հայաստանում ԱԸՊ ինստիտուտի ներդրման մոտեցումներ

«Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագիր, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2023թ.

Հավելված Բ - Թափոնի խմբերի ընտրության չափանիշներ

Ներկայացված գնահատման աղյուսակում բերված ցուցանիշները մասամբ գնահատվել են փորձագիտական կարծիքի հիման վրա ճշգրիտ տվյալների և դրանց հավաքագրման համակարգերի բացակայության պատճառով:

Թափոնի խումբ	**Շրջակա միջավայրի և կլիմայի ազդեցություն**	**Տեսակավորված հավաքման ենթակառուցվածք կամ մեխանիզմներ**	**Վերամշակման, մշակման, վնասազերծման ենթակառուցվածք**	**Տնտեսական ազդեցություն և ներուժ**	**Այլ ասպեկտներ, օր. էներգետիկ անվտանգություն, հումքի պաշարներ**
Փաթեթավորում և տարա (ոչ վտանգավոր)	Բարձր Աղբանոցներից կորզումն իրականացվում է սանիտարահիգիենիկ նորմերի կոպիտ խախտումներով: Չկորզված փաթեթավորումը հայտնվում է բնական միջավայրում՝ աղտոտում հողերն ու ջրային համակարգերը, վնասում կենսաբազմազանությ	Առկա է մասամբ Աղբանոցներից վերամշակելի փաթեթավորման (ապակե, թղթե, պլաստիկ, մետաղե շշեր, տարաներ, տուփեր) կորզումն ու վաճառքն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով (մոտ 95% ողջ ծավալից) ՏԻՄ-երի և այլ կազմակերպություններ ի կողմից տեսակավորում (մոտ	Առկա է ներկայում տեսակավորվող քանակներին համապատասխան	Բարձր Աղբանոցներից կորզման ժամանակ աղտոտվելու արդյունքում ընկնում է վերամշակելի հումքի արժեքը: ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ֆորմալացումը կամրապնդի հավաքող և վերամշակող կազմակերպությունների կարողությունները և զգալիորեն կբարձրացնի վերամշակման կամ վնասազերծման	Երկրորդային հումքի արտադրության քանակների և որակի բարձրացում

	անը և հանրային առողջությանը:	5% ողջ ծավալից)		ծավալները:	
Փաթեթավորում և տարա (վտանգավոր, օր. քիմիկատների տարա)	Բարձր Փաթեթավորումը հայտնվում է բնական միջավայրում՝ արդյունքում աղտոտում հողերն ու ջրային համակարգերը, վնասում կենսաբազմազանությանը և հանրային առողջությանը:	Առկա չէ Իբրև վտանգավորության որոշակի դաս ունեցող, այս թափոնը **պետք է** հավաքվի և տեղափոխվի մշակման գործարան լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Գյուղատնտեսական քիմիկատների տարաները թափվում են դաշտերում (տարեկան մոտ 200-300 հազար տարա): Կենցաղային քիմիկատների տարաները թափվում են համայնքային աղբանոցներում	Առկա է մասամբ Իբրև վտանգավորության որոշակի դաս ունեցող, այս թափոնը **պետք է** վնասազերծվի կամ վերամշակվի լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Երկրում առկա է կիզման եղանակով թափոնների վնասազերծման երկու լիցենզավորված կազմակերպություն, որոնք կարող են ընդունել նաև գյուղատնտեսական և կենցաղային քիմիկատների տարաներ:	Միջին ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ստեղծումը կամրապնդի հավաքող, տեղափոխող և վնասազերծող լիզենզավորված կազմակերպությունների կարողությունները: Կա նաև այս թափոնները վերամշակելու (երկրորդային հումքի արտադրության) հնարավորություն:	Սննդային անվտանգության բարելավում

		Կա բարելավման մեծ ներուժ:			
Անվադողեր	Միջին Անվադողերը մասամբ այրվում են՝ մթնոլորտ արտանետելով թունավոր նյութեր և ջերմոցային գազեր: Անվադողերը մասամբ օգտագործվում են առաջնագծում:	Առկա է Իբրև վտանգավորության 4-րդ դաս ունեցող, այս թափոնը **մասամբ** հավաքվում, տեղափոխվում և վերամշակվում է լիցենզավորված կազմակերպության կողմից: Կա բարելավման մեծ ներուժ Հավաքվում և կուտակվում է վաճառքի վայրերում	Առկա է մասամբ Երկրում առկա է պիրոլիզի եղանակով անվադողեր, յուղեր և այլ թափոններ վերամշակող մեկ լիցենզավորված կազմակերպություն, որն ունի զարգացման մեծ ներուժ:	Բարձր ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ֆորմալացումը կբարձրացնի հավաքող և վերամշակող կազմակերպությունների կարողությունները և զգալիորեն կբարձրացնի վերամշակման ծավալները:	Էներգետիկ անվտանգության բարելավում
Օգտագործված յուղեր, օդի և յուղերի օգտագործված զտիչներ	Բարձր Օգտագործված յուղերը մասամբ այրվում են կենցաղային	Առկա է Իբրև վտանգավորության որոշակի դաս ունեցող, այս թափոնը **մասամբ**	Առկա է մասամբ Երկրում առկա է պիրոլիզի եղանակով անվադողեր, յուղեր և այլ թափոններ	Միջին ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ֆորմալացումը կբարձրացնի հավաքող և	Էներգետիկ անվտանգության բարելավում

	պայմաններում՝ մթնոլորտ արտանետելով թունավոր նյութեր և ջերմոցային գազեր: Օգտագործված յուղերը մասամբ թափվում են շրջակա միջավայր: Արդյունքում աղտոտվում են հողերն ու ջրային համակարգերը, վնաս է հասցվում կենսաբազմազանությանը և հանրային առողջությանը:	հավաքվում և տեղափոխվում և վերամշակվում է լիցենզավորված կազմակերպության կողմից: Կա բարելավման մեծ ներուժ: Հավաքվում և կուտակվում է վաճառքի վայրերում:	վերամշակող մեկ լիցենզավորված կազմակերպություն, որն ունի զարգացման մեծ ներուժ:	վերամշակող կազմակերպությունների կարողությունները և զգալիորեն կբարձրացնի վերամշակման կամ վնասազերծման ծավալները:	
Մարտկոցներ և կուտակիչներ	Բարձր Ավտոմոբիլային մարտկիցների դեպքում մոտ 800 տոննա ծծմբային թթու արտանետվում է շրջակա միջավայր ոչ ֆորմալ	Առկա է Ավտոմոբիլային մարտկիցները հավաքվում և կուտակվում են վաճառքի վայրերում: Իբրև	Առկա է Ավտոմոբիլային մարտկոցների վերամշակման 2 լիցենզավորված կազմակերպություն: Առկա **չէ**	Բարձր ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ստեղծումը կամրապնդի հավաքող, տեղափոխող և վնասազերծող լիզենզավորված կազմակերպությունների	Երկրորդային հումքի արտադրության քանակների և որակի բարձրացում

	դերակատարների կողմից տեղափոխման գործողությունների ժամանակ: Արդյունքում աղտոտվում են հողերն ու ջրային համակարգերը, վնաս է հասցվում կենսաբազմազանության և հանրային առողջությանը: Կենցաղային մարտկոցները և կուտակիչները խառը կենցաղային թափոնների հետ միասին տարվում են համայնքային աղբանոցներ: Արդյունքում աղտոտվում են հողերն ու ջրային համակարգերը, վնաս է հասցվում կենսաբազմազանությ	վտանգավորության որոշակի դաս ունեցող, ավտոմոբիլային մարտկիցների թափոնը **պետք է** հավաքվի և տեղափոխվի մշակման գործարան լիցենզավորված կազմակերպությունների կողմից: **Սակայն** դրանք տեղափոխվում են վերամշակման գործարաններ ոչ ֆորմալ ձևով: Կա բարելավման մեծ ներուժ: Կենցաղային մարտկոցները և կուտակիչները խառը կենցաղային թափոնների հետ միասին տարվում են համայնքային աղբանոցներ: ԱԸՊ-ն կարող է	կենցաղային մարտկոցների և կուտակիչների վերամշակման ենթակառուցվածք, սակայն ԱԸՊ-ն կարող է խթանել ապահով պահեստավորման ենթակառուցվածքի ստեղծումը:	կարողությունները և զգալիորեն կբարձրացնի վերամշակման կամ վնասազերծման ծավալները:	

	անը և հանրային առողջությանը:	խթանել ապահով հավաքման և տեղափոխման ենթակառուցվածքի ստեղծումը:			
ԷԷՍ	Միջին ԷԷՍ-ները, (օր. հնամաշ կենցաղային տեխնիկան՝ փոշեկուլներ, սառնարաններ, լվացքի մեքենաներ) մասամբ տարվում են աղբանոցներ, որտեղ այրվում են մետաղների կորզման նպատակով՝ առաջացնելով հրդեհների բարձր ռիսկեր և արտանետելով թունավոր նյութեր և ջերմոցային գազեր:	Առկա է մասամբ Իբրև վտանգավորության որոշակի դաս ունեցող, այս թափոնները **պետք է** հավաքվեն և տեղափոխվեն մշակման գործարան լիցենզավորված կազմակերպություններ ի կողմից: **Սակայն** այն տեղի է ունենում ոչ ֆորմալ ձևով: Գործում է միայն արժեք ունեցող սարքերի պարագայում, օր. համակարգիչներ, հեռախոսներ, սառնարաններ, լվացքի մեքենաներ և	Առկա է մասամբ Իրականացվում է հիմնականում ոչ ֆորմալ ձևով:	Բարձր ԱԸՊ-ի միջոցով այս արժեշղթայի ստեղծումը կամրապնդի հավաքող, տեղափոխող, վնասազերծող և վերամշակող կազմակերպությունների կարողությունները և զգալիորեն կբարձրացնի վերամշակման կամ վնասազերծման ծավալները:	Երկրորդային հումքի արտադրության քանակների և որակի բարձրացում

		այլն: Իրականացվում է հիմնականում ոչ ֆորմալ ձևով:			
ՇԴԵՏՄ	Բարձր Տրանսպորտային միջոցներից արժեք ունեցող բաղադրիչների կորզման ժամանակ յուղերը և այլ տեխնիկական հեղուկերը հիմնականում թափվում եմ շրջակա միջավայր: Արդյունքում աղտոտվում են հողերն ու ջրային համակարգերը, վնաս է հասցվում կենսաբազմազանության և հանրային առողջությանը:	Իբրև վտանգավորության որոշակի դաս ունեցող, թափոն դարձած ավտոմոբիլային բաղադրիչների մեծ մասը **պետք է** հավաքվի և տեղափոխվի մշակման գործարան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:	Առկա է մասամբ Իրականացվում է հիմնականում ոչ ֆորմալ ձևով:	Միջին Սակայն տրանսպորտային միջոցներից արժեք ունեցող բաղադրիչների կորզումն ու վաճառքն իրականացվում է ոչ ֆորմալ ձևով:	Երկրորդային հումքի արտադրության քանակների և որակի բարձրացում

Հավելված Գ - Հաշվետվողականությունը ԱԸՊ համակարգում



Հայաստանում ԱԸՊ ինստիտուտի ներդրման մոտեցումներ

«Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագիր, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2023թ.

Հավելված Դ - ՀՀ-ում առաջարկվող ԱԸՊ օրենսդրական կառուցվածք

(նախագիծ)

N	ՆՈՐ ՄՇԱԿՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ
1	«Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագիծ
2	«Հայաստանի Հանրապետությունում արտադրված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված հատուկ թափոնի վերածվող ապրանքների և մասնակի կամ ամբողջական գործածության ենթակա հատուկ թափոնների տեխնիկական կանոնակարգը և ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ Հավելված 1՝ Տեխնիկական կանոնակարգ Հավելված 2՝ Ցանկ

3	«Արտադրողների, ներմուծողների, արտադրողների պատասխանատվության կազմակերպությունների և հատուկ թափոնների ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրաման Հավելված 1՝ Կարգ

N	ԹՂԹԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
2	ՀՀ Հարկային օրենսգիրք
3	ԵԱՏՄ մաքսային օրենսգիրք
4	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
5	«Թափոնների մասին» ՀՀ օրենք

6	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք
7	«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք
8	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
9	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
10	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք
11	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք
12	«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք
13	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք
14	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
15	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք
16	«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք

17	«Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափոնիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1511-Ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N1562-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշում
18	«Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշում
19	«Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 11.06.2018 թվ. թիվ 745-Ն որոշում
20	«Ամփոփ հաշվետվություն թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև թիվ 1-թափոն պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 22.11.2002թ. N208-Ն որոշում

Հավելված Ե - ԱՊԿ-ի հնարավոր կազմակերպական-իրավական ձևեր

	ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ
Սահմանում	Քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և **անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն**, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:	Քաղաքացիների և իրավաբանական անձանց **անդամության վրա հիմնված** ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով **մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով** ստեղծված կամավոր միավորում:
Գույք	Որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և **իր պարտավորությունների համար պատասխանատու** է այդ գույքով: Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները: Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով: Գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝ 1) հիմնադրի ներդրումը. 2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների,	Սեփականության ներքո գտնվող գույքը, կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան, ձևավորվում է նրա անդամների կողմից վճարված փայերից: Կոոպերատիվի անդամը պարտավոր է մինչև կոոպերատիվի գրանցումն ամբողջությամբ մուծել փայավճարը, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ: Կոոպերատիվի կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ կոոպերատիվին պատկանող գույքի որոշակի մասը կանոնադրությամբ սահմանված նպատակներով օգտագործվող անբաժանելի ֆոնդ է: Անբաժանելի ֆոնդերն օգտագործելու մասին որոշումը կոոպերատիվի անդամներն ընդունում են միաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

	իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները. 3) դրամական մուտքերը պետական բյուջեից. 4) դրամաշնորհները. 5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները. 6) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում). 7) օրենքով չարգելված այլ միջոցները:	
Լիազորություններ	Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝ ● ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ. ● ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացնելու նպատակով: Հիմնադրամը **կարող է** ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամն իրավունք ունի անձամբ զբաղվելու **միայն** իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով:	Կոոպերատիվի կազմակերպական իրավական ձևի առանձնահատկությունները, իրավունքներն ու պարտականությունները կարգավորված չեն առանձին օրենքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կոոպերատիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և իրավական վիճակը, ինչպես նաև նրանց անդամների իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանվել նաև այլ օրենքներով:

Շահառուներ	Ֆիզիկական և իրավաբանական այն անձինք, որոնց օգտին, հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան, կարող են կատարվել կամ կատարվել են որոշակի վճարումներ, մատուցվել ծառայություններ կամ նրանց փոխանցվել հիմնադրամի գույքի որոշ մասը:	Կոոպերատիվի անդամները
Կառավարում	Կառավարման մարմիններն են. - որպես բարձրագույն մարմին՝ **հոգաբարձուների խորհուրդը,** - որպես գործադիր մարմին՝ **կառավարիչը** (տնօրենը, գործադիր տնօրենը կամ գլխավոր տնօրենը): Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, **այդ թվում՝ հիմնադիրները**: Հոգաբարձուների խորհրդի քանակական կազմը չի կարող պակաս լինել 3 անդամից: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմավորվում է կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ եթե կանոնադրությամբ նման կարգ սահմանված չէ, ապա յուրաքանչյուր հիմնադիր հոգաբարձուների խորհրդի մեկ անդամ սկզբունքով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ: Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:	Կառավարման մարմիններն են. - որպես բարձրագույն մարմին՝ **կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովը,** - որպես գործադիր մարմին՝ **վարչությունը և (կամ) նախագահը:** Կոոպերատիվի կառավարման մարմինների իրավասությունը և նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով ու կոոպերատիվի կանոնադրությամբ: Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝ 1) կոոպերատիվի կանոնադրությունը փոփոխելը. 2) դիտորդ խորհուրդ կազմավորելը և նրա անդամների լիազորությունները դադարեցնելը, ինչպես նաև կոոպերատիվի գործադիր մարմիններ կազմավորելն ու նրանց լիազորությունները դադարեցնելը, եթե կոոպերատիվի կանոնադրությամբ այդ իրավունքը չի տրվել դիտորդ խորհրդին. 3) կոոպերատիվի անդամներ ընդունելը և հեռացնելը.

	Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝ 1) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը. 2) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը. 3) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը. 4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը. 5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, եթե կանոնադրությամբ նախատեսված է վերակազմակերպման հնարավորություն. 6) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը. 7) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը. 8) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը. 9) հոգաբարձուների խորհրդի նախագահի, կառավարչի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը. 10) հիմնադրամի՝ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը. 11) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների	4) կոոպերատիվի տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները հաստատելն ու վնասները բաշխելը. 5) կոոպերատիվի վերակազմակերպման և լուծարման մասին որոշում ընդունելը: Կոոպերատիվների մասին օրենքներով և կոոպերատիվի կանոնադրությամբ կոոպերատիվի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը կարող է վերապահվել նաև այլ հարցերի լուծում: 50-ից ավելի անդամ ունեցող կոոպերատիվում կարող է ստեղծվել **դիտորդ խորհուրդ** (վերջինիս անդամներն իրավունք չունեն գործել կոոպերատիվի անունից), որը վերահսկողություն է իրականացնում կոոպերատիվի գործադիր մարմինների գործունեության նկատմամբ: Կոոպերատիվի **գործադիր մարմիններն են՝** նրա վարչությունը և (կամ) նախագահը, ովքեր հաշվետու են դիտորդ խորհրդին ու կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին: Դիտորդ խորհրդի և վարչության անդամներ, ինչպես նաև կոոպերատիվի նախագահ կարող են լինել միայն կոոպերատիվի անդամները: Դիտորդ խորհրդի կամ գործադիր մարմնի անդամը չի կարող լինել համանման այլ կոոպերատիվի անդամ: Կոոպերատիվի անդամը չի կարող միաժամանակ լինել դիտորդ խորհրդի և վարչության անդամ կամ կոոպերատիվի նախագահ:

	ընդունումը, եթե կանոնադրությամբ նախատեսված է փոփոխություններ կատարելու հնարավորություն. 12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը. 13) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը. 14) կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ կառավարչի հաշվետվությունների լսումը. 15) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը. 16) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը. 17) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը. 18) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը. 19) սույն օրենքով, կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը: Կառավարչի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը: Կառավարչին ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը: Կառավարիչը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:	
Պատասխանատվություն	Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ հիմնադրամը	Կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել առաջացած վնասները: Այս

	պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:	պարտականությունը չկատարելու դեպքում կոոպերատիվը, պարտատերերի պահանջով, կարող է լուծարվել դատական կարգով: Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասի սահմաններում:
Հաշվետվողականություն	Ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն: Հիմնադրամի կողմից «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան: Հիմնադրամի կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք կարող են վերացվել հիմնադրամի ձեռնարկած միջոցառումներով, վերահսկողություն իրականացնող կամ պետական լիազորված մարմինը հիմնադրամ է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները: **Յուրաքանչյուր տարի** հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ հիմնադրամը՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պարտավոր է հրապարակել՝	Կոոպերատիվների կարգավիճակը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հաշվետվողականության առնչությամբ առանձնահատուկ պահանջներ, հաշվետվության տեսակներ սահմանված չեն, այսինքն՝ այս կազմակերպությունների նկատմամբ կիրառելի են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հաշվետվողականության ընդհանուր դրույթները: ԱՊԿ-ի համար ոչ առևտրային կոոպերատիվ կազմակերպական իրավական ձևի ընտրության դեպքում այլ հաշվետվություններ ներկայացնելու պահանջը կարող է սահմանվել ԱԸՊ օրենսդրությամբ:

	• հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը. • հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը: Սահմանված ժամկետում վերը նշված հաշվետվությունը չհրապարակելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Պետական եկամուտների կոմիտեն կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաշվետվության հրապարակման պահանջը պատշաճ չկատարելու դեպքում Պետական եկամուտների կոմիտեն դիմում է դատարան՝ **հիմնադրամը լուծարելու պահանջով**:	

Հավելված Զ - ԵԱՏՄ երկրներում եվ Վրաստանում ներդրված ԱԸՊ ինստիտուտի վերաբերյալ տեղեկանք (նախագիծ)

Ռուսաստանի Դաշնություն

1. ԵԱՏՄ անդամ Ռուսաստանի Դաշնությունում արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը ներդրվել է 2014 թվականին՝ «Արտադրության և սպառման թափոնների մասին» ՌԴ դաշնային օրենքում լրացում կատարելով, իսկ ուժի մեջ է մտել 2015 թվականից: /**Федеральный закон от 24.06.1998 N 89-ФЗ (ред. от 19.12.2022) "Об отходах производства и потребления" (с изм. и доп., вступ. в силу с 06.01.2023)** (РОП - 24-ая статья)/ [1]

ՌԴ-ում գործում են թափոնների ուտիլիզացիայի նորմատիվներ, այսինքն պարտադիր գործածության ենթակա թափոնների մասնաբաժին՝ ընդհանուր գոյացող թափոնների տոկոսային հաշվարկով, որը հաստատվում է ՌԴ կառավարության կողմից: /**НОРМАТИВЫ УТИЛИЗАЦИИ ОТХОДОВ ОТ ИСПОЛЬЗОВАНИЯ ТОВАРОВ НА 2021 - 2023 ГОДЫ/**[2]

Այն դեպքում, երբ արտադրողի կամ ներմուծողի կողմից օրենքով սահմանված կարգով ԱԸՊ ինստիտուտի շրջանակներում թափոնը չի ենթարկվում գործածության, ապա ՌԴ-ում կիրառվում է ԱԸՊ վճարը, որը սահմանվում է ապրանքների խմբերի համար և ևս հաստատվում է ՌԴ կառավարության կողմից: /**СТАВКИ ЭКОЛОГИЧЕСКОГО СБОРА/** [3]

2. ՌԴ-ում ԱԸՊ ինստիտուտի ներդրման և գործելու 6 տարիների վերլուծության արդյունքում, ՌԴ փոխվարչապետի կողմից 28.12.2020 թվ. հաստատվել է «ԱԸՊ ինստիտուտի կատարելագործման հայեցակարգը»՝ վերհանելով ԱԸՊ իրավական խնդիրները, ինստիտուտի ներդրման գործնական խոչընդոտները և լուծման տարբերակները, ինչպես նաև լուծումների նախապատվությունները [4]:

3. 2023 թվականի փետրվարի 10-ին Անտառարդյունաբերության զարգացման վերաբերյալ քննարկման համատեքստում ՌԴ կառավարության ղեկավարին հանձնարարական է տրվել մինչև 2023 թվականի հունիսի 1-ը պլաստիկի արտադրանքից հրաժարվելու նպատակով՝ բնակչության, սննդի և

վերամշակող արդյունաբերության կազմակերպությունների, ինչպես նաև առևտրի, հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի կողմից մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) տարաների, փաթեթավորման, սպասքի օգտագործման մասնաբաժնի ավելացում՝ պլաստիկ արտադրանքից հրաժարվելու համար:

Այս հանձնարարականի արդյունքում ՌԴ Մակուլատուրայի վերամշակողների Լիգայի և ՌԴ կառավարության համատեղ ջանքերով այս կարգավորումը ևս կներառվի «Արտադրության և սպառման թափոնների մասին» ՌԴ դաշնային օրենքում գարնանը սպասվող լրացումներում և փոփոխություններում, որը, ըստ սպասվածի, ուժի մեջ կմտնի 2024 թվականի հունվարի 1-ից:

4. ՌԴ մոդելը շեշտադրում է ոչ թե պոտենցիալ թափոնի նվազմանն ուղղված միջոցառումները, այլ վերամշակման ծավալի ավելացումը՝ առավելագույնի հասցնելով վերամշակող ճյուղի եկամուտները՝ չվերամշակվող կամ դժվար վերամշակվող տարան և փաթեթավորումը վերամշակվողի փոխարինելու միջոցով: Այս մասին ուղղակի նշվում է նաև «ԱԸՊ ինստիտուտի կատարելագործման հայեցակարգում» (Գլուխ 3):

5. Եթե թղթե և ստվարաթղթե փաթեթավորում արտադրողն օգտագործում է երկրորդային հումք, ապա ԱԸՊ վճարը այդպիսի արտադրողի համար կազմում է 0:

Այստեղ սակայն կա ամրագրում, ըստ որի թղթի և ստվարաթղթի վերամշակման արդյունքում ստացված փաթեթավորումը չի կարող օգտագործվել սննդամթերքի փաթեթավորման նպատակով, և «հիգիենիկ սերտիֆիկատ» կարող է ստանալ բացառապես առաջնային հումքից արտադրված թղթե փաթեթավորումը:

6. ՌԴ-ում գործարկվել է «Պետական կանաչ գնումներ»/ Green public procurement (ГЗЗ) կոնցեպտը:

Էկոլոգիապես մաքուր պետական գնումների հայեցակարգի ներդրումը ՌԴ գնումների պետական համակարգում պետք է դառնա երկրի տնտեսական զարգացման պետական քաղաքականության գործիք՝ չվնասելով շրջակա միջավայրը և բնակչության կյանքի որակը:

Սա ենթադրում է, որ պետական գնումների ժամանակ հայտարարվում են ապրանքների և ծառայությունների նկատմամբ սահմանված պետական այն չափանիշները, որոնք նախապատվության իրավունք ունեն գնումների նախաորակավորման և որակավորման փուլերում:

Ակնկալվում է, որ պետական (հանրային) կանաչ գնումների շրջանակներում բնապահպանական չափանիշների ներդրումը կարող է, ի թվս այլոց, հանգեցնել նաև հետևյալ դրական փոփոխությունների.

- աղբավայրերում թաղվող թափոնների ծավալի կրճատում, թափոնների վերամշակման տոկոսի ավելացում: Արտադրական թափոնների ծավալի կրճատում.
- ապրանքների արտադրության և ծառայությունների մեջ օգտագործվող՝ վերականգնվող ռեսուրսների մասնաբաժնի ավելացում.
- արտադրությունից առավել վնասակար նյութերի դուրսբերում:

Արևմտյան մի շարք երկրների օրինակով օրենսդրությունը նախապատվություն է տալիս ապրանքների որոշակի խմբերի գնմանը, որոնք ունեն ազգային բնապահպանական վկայագիր՝ էկոպիտակ:

Որպես գործառնական ձեռնարկ ՌԴ-ում մշակվել է «Պետական գնումներում բնապահպանական չափանիշները ներառելու ուղեցույց»[5]:

5. Այս պահին ԵԱՏՄ-ի շրջանակներում սինխրոնիզացվում են ԱԸՊ ինստիտուտի ՌԴ-ի և Բելառուսի օրենսդրությունները:

Բելառուս

1. Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտը ԵԱՏՄ անդամ Բելառուսում կարգավորվում է ոչ առանձին օրենքով, այլ՝ 2007 թվականին ընդունված «Թափոնների կառավարման մասին» օրենքով (Закон РБ «Об обращении с отходами»)[6]:

Ռուսաստանի Դաշնության համապատասխան օրենքի համեմատությամբ (Закон РФ «Об отходах производства и потребления») ԱԸՊ-ի ինստիտուտը կարգավորող հոդվածներն անհամեմատ ավելի քիչ են, մեծ հաշվով ընդամենը 2՝ հոդված 13 «Թափոնների կառավարման ոլորտում տնտեսական խթանները» և հոդված 20 «Ապրանքների սպառողական հատկությունների կորստից հետո առաջացած թափոնների և փաթեթավորման թափոնների կառավարման նկատմամբ պահանջները»:

2. Ի տարբերություն ՌԴ, ԱԸՊ ինստիտուտի շրջանակներում պարտադիր գործածության ենթակա ապրանքների անվանացանկը հաստատվում է ոչ թե կառավարության կողմից, այլ՝ ԲՀ նախագահի (հոդված 20, 1-ին մաս): Մասնավորապես, «Սպառողական թափոնների կառավարման մասին» ԲՀ նախագահի 2012 թվականի հուլիսի 11-ի թիվ 313 հրամանը,[7] որով հիմք է դրվել ԱԸՊ ինստիտուտի կանոնակարգմանը :

3. ԱԸՊ սկզբունքը Բելառուսում տարածվում է հետևյալ ապրանքների վրա.

- կենցաղային տեխնիկա (սառնարաններ, հեռուստացույցեր, օդորակիչներ, գազօջախներ, հարիչներ, լվացքի և կարի մեքենաներ, պատճենահանման սարքեր, տպիչներ, համակարգչի մոնիտորներ, պրոյեկտորներ, հաշվիչ տեխնիկա, փոշեկուլներ, էլեկտրական սափրիչներ, հյութաքամիչներ),
- տարա որպես ապրանք (պոլիմերային, ապակյա, թղթե և ստվարաթղթե, համակցված / *комбинированная*/)
- անվադողեր
- քսայուղեր
- սնդիկ պարունակող լամպեր, ջերմաչափեր
- մարտկոցներ, կուտակիչներ:

ԱԸՊ սկզբունքը չի տարածվում հետևյալ ապրանքների վրա.

- արտահանվող ապրանք, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (հոդված 20, մաս 2),
- դեղորայք, բժշկական և սոցիալական նշանակության ապրանքներ.
- ապրանքներ, որտեղ օգտագործվել է երկրորդային հումք առնվազն 30 %-ի չափով (ապակու թափոններ, թուղթ, յուղեր, պլաստիկ).
- այն փաթեթավորման վրա, որով ներմուծվում են ապրանքներ, և որոնք ներմուծողի համար հանդիսանում են հումք, նյութեր կամ բաղադրիչներ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար.
- այն արտադրողների վրա, որոնք ստանձնել են թափոնների անվտանգ կառավարման պատասխանատվություն:

4. Բելառուսի Հանրապետությունում, ինչպես և ՌԴ-ում, գործում է նորմատիվների (targets) սկզբունքը, իսկ ապրանքների և փաթեթավորման հավաքման պարտավորության իրականացման տարբերակները հետևյալն են.

1. հավաքման սեփական համակարգի կիրառում (հավաքման կետեր, կոնտեյներներ) և հավաքագրված թափոնների հետագա փոխանցում վերամշակման հետևյալ չափով.

- ապրանքներ՝ 2020 թվականից 30 տոկոս (իսկզբանե՝ 10 տոկոս),
- թղթի, ստվարաթղթի, պոլիմերային և համակցված (комбинированная) տարա և փաթեթավորում, անվադողեր, քսայուղեր՝ 2020 թվականից 50 տոկոս (իսկզբանե՝ 30 տոկոս),
- ապակյա տարա՝ 2020 թվականից 70 տոկոս (ի սկզբանե՝ 30 տոկոս),

(*մի շարք սոցիալական ապրանքների՝ կաթ, հաց, շաքար, պոլիմերային տարան և փաթեթավորման նկատմամբ ԱԸՊ չի տարածվում)

5. Համապատասխան օպերատորի (վերամշակողի) հետ պայմանագրի կնքում և ծառայությունների պատվիրակում:

Բելառուսում պետությունը չի կարգավորում երկրորդական ռեսուրսների առքուվաճառքի գները (բացառությամբ սև և գունավոր մետաղների թափոնների): Երկրորդային հումքի գները ձևավորվում են պայմանագրային հիմունքներով կողմերի միջև: Օրենսդրությունը թույլ է տալիս վերամշակվող նյութերի գները սահմանել՝ հաշվի առնելով շուկայում տիրող իրավիճակը: Միաժամանակ սահմանվում է, որ դրա գինը չի կարող գերազանցել առաջնային հումքի արժեքը՝ ներառյալ դրա վերամշակման ծախսերը: Միևնույն ժամանակ, Բելառուսում վերամշակվող նյութերի գնագոյացումն ունի իր խնդիրները, քանի որ դրա գները սահմանափակվում են առաջնային հումքի գների մակարդակով:

Վրաստան

2016 թվականին Վրաստանի կառավարությունն ընդունել է 2016-2030թթ. Թափոնների կառավարման ազգային ռազմավարությունը, իսկ մինչ այդ՝ 2015-2020թթ. թափոնների կառավարման ազգային պլանը: Մասնավորապես, համաձայն նշված փաստաթղթերի 2020 թվականին պլաստիկի վերամշակման ցուցանիշը պետք է կազմեր 30 %, իսկ 2025-ին՝ 50 % և 2030-ին՝ 80 %:

2015 թվականի հունվարի 15-ին Վրաստանի խորհրդարանն ընդունել է «Թափոնների կառավարման վերաբերյալ» օրենսգիրքը[8] (այսուհետ՝ «Օրենսգիրք»), որտեղ օրենսդիրը հռչակել է թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգության սկզբունքը (5R): Այնուամենայնիվ, Օրենսգիրքը նշված խմբագրությամբ պարունակում է դրույթներ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ (9-րդ հոդված): Նշված դրույթի համաձայն, առաջին հերթին պարտականություն է դրվում անմիջական արտադրողի վրա, այն է՝ շուկայում ապրանքը[9] վաճառքի հանելուց առաջ անմիջական արտադրողը պարտավորվում է ապրանքին տալ այնպիսի ձև, որը թույլ կտա.

- նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև նվազեցնել թափոնի առաջացումն արտադրության ընթացքում և ապրանքի հետագա օգտագործման արդյունքում,
- ապրանքի օգտագործումից առաջացած թափոնների մշակում և տեղադրում իրականացնել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն ապրանքի արտադրողը և այն անձը, ով ապրանքը շուկայում հանում է վաճառքի, պարտավոր են ապահովել թափոնների առանձնացված հավաքագրում, փոխադրում, վերականգնում (այդ թվում՝ վերամշակում) և շրջակա միջավայրի համար անվնաս տեղադրում: Նշված պարտականությունն իրականացվում է անհատապես կամ կոլեկտիվ՝ արտադրողներին միավորելու միջոցով:

Համաձայն Օրենսգրքի կարգավորման, արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտը Վրաստանում տարածվում է հետևյալ հատուկ թափոնի խմբերի վրա. փաթեթավորում (թուղթ/ստվարաթուղթ, պլաստիկ, փայտ, մետալ, ապակի), էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ, շահագործման ժամկետի (վիճակին) ավարտին հասած անվադողեր (ELTs), շահագործման ժամկետի (վիճակին) ավարտին հասած ավտոմեքենաներ (ELVs), օգտագործված յուղեր, օգտագործված մարտկոցներ և կուտակիչներ (WBA):

Ըստ օրենսգրքի Վրաստանի կառավարությունը (այսուհետ՝ «Կառավարություն») յուրաքանչյուր 5 տարին մեկ պարտավոր է մշակել թափոնների կառավարման վերաբերյալ ազգային գործողությունների պլան: Միևնույն ժամանակ, Կառավարության մշակած պլանի հիման վրա յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմին մշակում է թափոնների կառավարման վերաբերյալ իր գործողությունների պլանը: Ընդ որում, Օրենսգիրքը սահմանում է ընկերությունների՝ թափոնների կառավարման վերաբերյալ կանոնակարգի ընդունման պարտականությունը: Մասնավորապես, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնց գործունեության արդյունքում տարվա ընթացքում կուտակվում է ավելի քան 200 տոննա ոչ վտանգավոր կամ վտանգավոր թափոն ցանկացած քանակությամբ կամ ֆիզիկական անձանց դեպքում՝ ավելի քան 1000 տոննա իներտ թափոն, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ ավելի քան 400 տոննա իներտ թափոններ, պարտավոր են մշակել թափոնների կառավարման պլան (Օրենսգրքի 12-14 հոդվածներ): Հարկ է նշել, որ պլանը ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը և ենթակա է թարմացման յուրաքանչյուր 3 տարին մեկ:

2016 թվականի սեպտեմբերին WMTR թիմն աջակցել է Georgian Paper Production Ltd-ին թափոնների գույքագրման և թափոնների կառավարման պլանի մշակման գործում: Թբիլիսիում գտնվող վերոնշյալ ընկերությունը զբաղվում է թղթի վերամշակմամբ՝ զուգարանի թուղթ արտադրելու նպատակով: Թափոնների գույքագրման փաստաթղթում նշված է եղել ընկերության կողմից արտադրված թափոնների տեսակը, սահմանվել է դրանց վտանգի մակարդակը և նկարագրված է եղել դրանց հեռացման և վերականգնման գործողությունները: Թափոնների գույքագրման փաստաթղթի հիման վրա ընկերությունը մշակել է թափոնների կառավարման իր պլանը և նշել, թե ինչպես է կառավարում թափոնների խմբերը: Թափոնների կառավարման պլանը նաև պատասխանատվություն է սահմանում ընկերության աշխատակազմի համար՝ պլանի իրականացման մասով և բացահայտում է պայմանագրային կողմ հանդիսացող այն ընկերություններին, որոնք պատասխանատու են թափոնների հավաքման, վերականգնման և հեռացման համար (p. 32 - Waste management technologies in regions, Georgia):

Օրենսգրքի պահանջների հիման վրա մշակվել և ընդունվել է Կառավարության «Աղբավայրերի կազմակերպման, շահագործման, փակման և հետագա խնամքի ու պահպանման վերաբերյալ» կանոնակարգը (անգլ. By-law on the construction, operation, closure, and after-care of landfills), «Աղբակեզ վառարանների նախագծման, կառուցման և շահագործման վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը (անգլ. Technical Regulation on the Design, Construction, and Operation of Incinerators) և այլ ենթաօրենսդրական ակտեր:

2015թ. Վրաստանի Ազգային գործակալության հանրային գրանցամատյանում Waste Management Association-ի վերաբերյալ գրառմամբ Վրաստանում հիմնադրվել է թափոնների կառավարման ոլորտում առաջին մասնագիտացված կազմակերպությունը: Ներկայումս, Վրաստանում թափոնների կառավարման ոլորտում մեծ դեր ունի պետական մասնակցությամբ հիմնադրված Georgian Solid Waste Management Company-ն, որը նպատակաուղղված է իր գործունեությամբ կյանքի կոչելու "Integrated Solid Waste Management Program II" ծրագիրը:

Չնայած այն հանգամանքի, որ Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինները թափոնների կառավարման համար սահմանել էին համապատասխան վճար թափոններ առաջացողների համար (for institutional and business waste generators), համայնքապետարանների մեծ մասում այդ վճարները չէին վճարվում կամ համապատասխան վճարները գանձվում էին տեղի բնակչությունից: Ինստիտուցիոնալ և բիզնես թափոններ ստեղծողները վճարում էին վճարներ, որոնք զգալիորեն ցածր էին մատուցվող ծառայության իրական արժեքից: Արդյունքում մշակվել է թափոնների կառավարման համար անհրաժեշտ վճարների հաշվարկման մեթոդաբանություն, որի անկյունաքարն է «աղտոտողը վճարում է» (“polluter pays”) սկզբունքը: Հարկ է հավելել, որ Վրաստանում համայնքային թափոնների գոյացող ծավալը կազմում է 900 000 տոննա:

2020 թվականի մայիսի 25-ին Վրաստանի կառավարությունը հաստատել է թվով 4 տեխնիկական կանոնակարգեր, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի կանոններն ու պահանջները, որոնք կապված են կոնկրետ հատուկ թափոնի խմբի հետ, մասնավորապես.

1. «Մարտկոցների և կուտակիչների թափոնների կառավարման տեխնիկական կանոնակարգ» (Կառավարության N324 որոշում)

2. «Անվադողերի թափոնների կառավարման տեխնիկակակ կանոնակարգ» (Կառավարության N325 որոշում)

3. «Էլեկտրական և էլեկտրոնային սարքերի թափոնների տեխնիկական կանոնակարգ» (Կառավարության N326 որոշում)

4. «Օգտագործված յուղերի թափոնների տեխնիկական կանոնակարգ» (Կառավարության N327 որոշում)

Տեխնիկական կանոնակարգերը ներառում են կարգավորումներ համապատասխանության անհատական և կոլեկտիվ սխեմաների ստեղծման և թույլտվության պարտավորությունների և պահանջների, արտադրողների և ներմուծողների կողմից ԱԸՊ կազմակերպությունների (PRO) ստեղծման, վերջիններիս ռեեստրի ստեղծման, վարման և արտադրողների գրանցման կանոնների, յուրաքանչյուր կոնկրետ թափոնների հավաքման և վերամշակման համար տեխնիկական պահանջների, թափոնների վերամշակման/օգտագործման թիրախների փուլային ներդրման և վերահսկողության մեխանիզմների վերաբերյալ:

Ըստ տարիների թիրախները հաստատվել են 2016 թվականին ընդունված Թափոնների կառավարման ազգային ռազմավարությամբ.

Վրաստանի կառավարությունն ընդունել է նաև «Պոլիէթիլենային տոպրակների և կենսաքայքայվող տոպրակների տեխնիկական կանոնակարգը», որը համապատասխանում է EN 13432:2000 ԵՄ ստանդարտին: Այն սահմանում է տարայի և փաթեթավորման անաէորոբ պայմաններում վերամշակման և կոմպոստացման հնարավորությունների նկատմամբ պահանջները և ընթացակարգերը՝ հաշվի առնելով թվով 4 առանձնահատկություններ.

1) կենսաքայքայման հնարավորությունը,

2) քայքայման հնարավորությունը բիոլոգիական մաքրման ժամանակ,

3) կենսաբանական մաքրման գործընթացի վրա ազդեցությունը,

4) ստացված կոմպոստի որակի վրա ազդեցությունը:

2021 թվականին ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրերի և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ Վրաստանի Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել և հրատարակվել է «Արտադրողի ընդլայնված պատասխանատվություն. Ձեռնարկ արտադրողների համար»:[10]

Ձեռնարկը ներառում է հարցեր Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի իրավական կարգավորումների, ԱԸՊ մշտադիտարկման և հաշվետվողականության, ԱԸՊ ինստիտուտի մասնակիցների և միջազգային լավագույն օրինակների, ինչպես նաև շրջանաձև տնտեսության անցմանը միտված միջոցառումների վերաբերյալ:

---

[1] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19109/

[2] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_373500/7786840e813bc6e2aaa1ca8b4e41ad511aacfd29/#dst100009

[3] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_196689/e09fcce2c4923f46087f2f325f91efd33d4cd665/

[4] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://docs.cntd.ru/document/573324833

[5] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ecounion.ru/wp-content/uploads/2021/04/rukovodstvo-po-vklyucheniyu-ehkologicheskih-kriteriev-v-gosudarstvennye-zakupki-2021.pdf

[6] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://kodeksy-by.com/zakon_rb_ob_obrawenii_s_othodami.htm

[7] Հասանելի է հետևյալ հղումով՝ *https://kodeksy-by.com/norm_akt/source-%D0%9F%D1%80%D0%B5%D0%B7%D0%B8%D0%B4%D0%B5%D0%BD%D1%82%20%D0%A0%D0%91/type-%D0%A3%D0%BA%D0%B0%D0%B7/313-11.07.2012.htm*

[8] Նամակում կցված է Օրենսգիրքը 2020թ. փոփոխություններով հանդերձ, սակայն 2022թ. նույնպես տեղի են ունեցել փոփոխություններ Օրենսգրքում, ուղղակի այդ տարբերակը հասանելի չէ մեզ համար ռուսերեն կամ անգլերեն լեզվով:

[9] Խոսքը այնպիսի ապրանքի մասին է, որը կամ դրա մի մասը հետագայում վերածվում է հատուկ թափոնի:

[10] Հասանելի է հետևյալ հղումով՝ *https://www.undp.org/georgia/publications/extended-producer-responsibility-epr*